

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Հոդվածների ժողովածու

Երևան
Լուսակն
2023

ՀՏԴ 94(479.25):80(082)

ԳՄԴ 63.3(5Հ)+80g43

Փ 286

**Ժողովածուն տպագրության է երաշխավորել
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական
ֆակուլտետի խորհուրդը**

Խմբագիր՝ Մայա Գրիգորյան
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն

Ղազար Փարպեցի: Հոդվածների ժողովածու.- Եր.:

Փ 286 Լուսակն, 2023.- 89 էջ:

«Ղազար Փարպեցի» հոդվածների ժողովածուն ներկայացնում է բանասիրական ֆակուլտետի դասախոսների հոդվածները՝ նվիրված Ոսկեդարի (V դար) վերջին պատմիչ Ղազար Փարպեցու մատենագրական ժառանգության տարբեր խնդիրներին:

Ժողովածուն օգտակար է հայ գրականության ուսուցիչների, բանասիրական ու պատմության ֆակուլտետների ուսանողության և ընթերցասեր հասարակության համար:

ՀՏԴ 94(479.25):80(082)

ԳՄԴ 63.3(5Հ)+80g43

ISBN 978-9939-968-11-7

©Լուսակն, 2023

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՈՍԿԵԴԱՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ
ՊԱՏՄԻՉՆԵՐԻՑ ՄԵԿԻՆ՝
ԴԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ղազար Փարպեցին հայ մատենագրության ոսկեդարի (V դար) վերջին պատմիչն է, որից մեզ են հասել երկու կարևոր աշխատություններ՝ «Հայոց պատմությունը» և ստախոս արեղաներին ամբաստանող «Թուղթը»:

Փարպեցու պատմությունը շարունակում է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» ու եզակի սկզբնաղբյուր է հատկապես V դարում պարսիկների դեմ մղված երկրորդ ապստամբության դեպքերը լուսաբանելու առումով:

Փարպեցին ստուգապատում մատենագիր է, և նրա համար պատմական ճշմարտությունն Աստվածահաճո է: Նրա պատմության և «Թղթի» մեջ կան կենսագրական որոշ փաստեր: Պատմիչի ծննդավայրը Արարատյան նահանգի Փարպի գյուղն է, որն այսօր էլ կոչվում է նույն անունով: Ահա այդ այգեվետ գյուղում է ծնվել նշանավոր պատմիչը, որին Միքայել Նալբանդյանը համեմատել է հռոմեացի պատմիչ Տակիտոսի հետ (Ք.ծ.հ. առաջին դարի վերջ-երկրորդ դարի սկիզբ)՝ առանց վախենալու միջազգային հայագիտության դատաստանից: Մ. Նալբանդյանը Պետրոպավլովյան ամրոցում բանտարկված ժամանակ թարգմանել է Փարպեցու «Թուղթը» աշխարհաբարով՝ կցելով բանասիրական ու պատմագիտական մեծարժեք ծանոթագրություններ: Նա սկսել էր թարգմանել նաև Փարպեցու «Հայոց պատմությունը», սակայն վաղաժամ մահը խանգարեց նրա երազանքի իրականացմանը:

Ղազար Փարպեցին մեծ հայրենասեր է, նա իր երկի երրորդ հատվածը նկարագրում է որպես ակնառու:

Միջնադարյան մատենագիրները՝ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ, նրան հիշում են որպես նշանավոր պատմիչ ու ճարտասան:

Ճարտասանության փայլուն նմուշ է Փարպեցու «Թուղթը»՝ ուղղված ժամանակի մարգպան Վահան Մամիկոնյանին: Պատմության տեսանկյունից խիստ արժեքավոր այդ «Թղթում» առաջ քաշված

հարցադրումները արդիական են բոլոր ժամանակների համար: «Թղթից» պահպանվել էր միայն մեկ օրինակ Էջմիածնի մատենադարանում՝ կցված Փարպեցու պատմությանը: «Թուղթը» հայտնաբերել է Էջմիածնի մատենադարանի տնօրեն, եպիսկոպոս Հովհաննես Շահխաթունյանը և նրա պատճենն անմիջապես ուղարկել է Մոսկվա՝ Մկրտիչ Էմինին:

Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը» մեծարժեք աղբյուր է ոչ միայն V դարի Հայաստանի, այլև հարևան ժողովուրդների պատմական անցյալը ճշգրտորեն ուսումնասիրելու առումով, և այդ դիտակետից այն ստացել է միջազգային արժեք ու թարգմանված է եվրոպական լեզուներով:

Այս ժողովածուի հոդվածները վերստին հայ հանրությանը ներկայացնում են միջնադարի դասական մատենագրի կատարածի կարևորությունը:

Պրոֆեսոր Աելիսա Դուլիսանյան

ДВА СЛОВА

Лазарь Парпеци – последний историк золотого века армянской литературы (V век), от которого до нас дошли два важных труда: «История Армении» и «Послание», обвиняющее лживых монахов.

«История» Парпеци продолжает «Историю Армении» Павстоса Бузанда и является уникальным источником, особенно с точки зрения освещения событий второго восстания против персов в V веке.

Парпеци – правдивый летописец и для него историческая правда божественна. В его «Истории» и в «Послании» есть некоторые биографические факты. Его местом рождения является село Парпи Араратской области, которое и сегодня носит то же название. Именно в этом богатом садами селе родился знаменитый историк, которого Микаэл Налбандян сравнил с римским историком Тацитом (конец первого века – начало второго века нашей эры), не опасаясь осуждения международного арменоведения.

М. Налбандян, находясь в заключении в Петропавловской крепости, перевел «Послание» Парпеци на современный армянский язык, приложив ценные филологические и исторические аннотации. Он также начал переводить «Историю Армении» Парпеци, но ранняя смерть помешала осуществлению его мечты.

Лазарь Парпеци – великий патриот и третью часть своего труда он описывает как очевидец.

Средневековые летописцы – Степанос Таронеци Асогик, Киракос Гандзакечи и другие вспоминают его как известного историка и ритора.

«Послание» Парпеци, адресованное тогдашнему губернатору Вагану Мамиконяну, представляет собой блестящее риторическое произведение. Вопросы, поднятые в этом «Послании», сказаны на все времена. Единственный сохранившийся экземпляр находится в Эчмиадзинском хранилище и приложен к истории Парпеци. «Послание» было открыто директором Эчмиадзинского хранилища епископом

Ованнесом Шаххатуняном, который и немедленно отправил его копию в Москву Мкртичу Эмину.

«История Армении» Лазаря Парпеци является ценным источником не только для точного изучения исторического прошлого Армении V века, но и соседних народов, и с этой точки зрения представляет международное значение и была переведена на европейские языки. Статьи этого сборника еще раз представляют армянской общественности значимость классического летописца средневековья.

Профессор Аэлита Долуханян

TWO WORDS

Lazar Parpetsi is the last historian of the Golden Age of Armenian literature (5th century), from which two important works have come down to us: History of Armenia and a Message, accusing the false monks.

The History of Parpetsi continues the History of Armenia by Pavstos Buzand and is a unique source, especially in terms of covering the events of the second uprising against the Persians in the 5th century.

Parpetsi is a truthful chronicler and for him the historical truth is divine. There are some biographical facts in his History and in the Message.

His birthplace is the village of Parpi in the Ararat region, which still bears the same name today. It was in this village, rich in gardens, that was born the famous historian, whom Mikael Nalbandian compared with the Roman historian Tacitus (end of the first century - beginning of the second century AD), without fear of condemnation by international Armenian studies.

M. Nalbandian, while imprisoned in the Peter and Paul Fortress, translated the Message of Parpetsi into modern Armenian, adding valuable philological and historical annotations. He also began translating Parpetsi's History of Armenia, but an early death prevented his dream from being realized.

Lazar Parpetsi was a great patriot; he described the third part of his work as an eyewitness.

Medieval chroniclers - Stepanos Taronetsi Asoghik, Kirakos Gandzaketsi and others remember him as a famous historian and rhetorician.

Parpetsi's Message addressed to the then governor Vahan Mamikonian is a brilliant piece of rhetoric. The questions raised in this Message are said for all time. The only surviving copy is kept in the Echmiadzin vault and is attached to the History of Parpetsi.

The Message was discovered by the director of the Echmiadzin repository, Bishop Hovhannes Shahkhatunian, who immediately sent a copy of it to Mkrtich Emin in Moscow.

The History of Armenia by Lazar Parpetsi is a valuable source not only for an accurate study of the historical past of Armenia in the 5th century, but also for neighboring peoples, and from this point of view it is of international importance and has been translated into European languages. Articles of this collection once again represent to the Armenian public the importance of the classical chronicler of the Middle Ages.

Professor Aelita Dolukhanyan



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*



ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Երևանի Լև Տոլստոյի անվան
թիվ 128 դպրոցի ուսուցչուհի*

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Ներածություն

Հայ գրականության հինգերորդ դարը, որն իրավամբ կոչվեց Ոսկեդար, հարուստ է պատմագիտական այնպիսի մատյաններով, որոնք ունեն ոչ միայն ազգային, այլև համամարդկային արժեք ու նշանակություն:

Ղազար Փարպեցին հինգերորդ դարի վերջին պատմիչն է, որն իր մասին որոշ կենսագրական տեղեկություններ է հաղորդում հռչակավոր «Թղթում»՝ ուղղված Հայաստանի այդ ժամանակի մարզպան Վահան Մամիկոնյանին: Նա Փարպեցի է կոչվել իր ծննդավայրի՝ Արագածոտնի Փարպի գյուղի անունով: Կրթությունը ստացել է

Վրաստանի Աշուշա բղեշխի տանը՝ Վահան Մամիկոնյանի հետ: Պատմիչը երախտագիտությամբ է հիշում երկու ազնվական կանանց, որոնք զբաղվել են իր դաստիարակությամբ: Առաջինը նահատակ Հմայակ Մամիկոնյանի կին Ձվիկն էր՝ Վահան Մամիկոնյանի մայրը, իսկ երկրորդը՝ Անուշվոռամն էր, որն ամուսնացած էր Աշուշա բղեշխի հետ:

Ղազար Փարպեցին հետազայում մեկնում է Հունաստան՝ ուսման մեջ կատարելագործվելու: Շատ երիտասարդ հասակում Վահան Մամիկոնյանը նրան նշանակել է տալիս Էջմիածնի կաթողիկե վանքի վանահայր: Տգետ աբեղաները չեն հանդուրժում բարձր կրթություն ստացած ու խիստ զարգացած վանահոր սահմանած կարգ ու կանոնը, այրում են եկեղեցու փայտաշեն գմբեթը, յուրացնում են նրա ունեցվածքը, հատկապես այն ժամանակվա համար բավական հարուստ գրադարանն ու նրան վոնդում վանքից: Որոշ ժամանակ Ղազարը Միջագետքի հայաշատ Ամիդ քաղաքում էր, որտեղից էլ գրում է իր հռչակավոր «Թուղթը», որով մարգպանի մոտ իրեն արդարացնում է և վերադառնում Հայաստան: «Թղթի» աշխարհաբար առաջին թարգմանիչ Միքայել Նալբանդյանը վերականգնել է Փարպեցու գիտական կենսագրությունը. նրա կարծիքով Փարպեցին ծնվել է 440 թվականների սկզբին և չի եղել Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի աշակերտը:

Փարպեցու «Հայոց պատմության» պատմական և գեղարվեստական արժեքը

Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունն» օգտագործվել է բոլոր այն պատմիչների կողմից, ովքեր փորձել են գրել ամբողջական պատմություն կամ անդրադարձել են Ավարայրի հերոսամարտի դեպքերին: Միքայել Չամչյանցը իր եռահատոր «Հայոց պատմության» առաջին ու երկրորդ հատորներում լայնորեն օգտագործել է Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը», հատկապես հինգերորդ դարի՝ հայերի պարսիկների դեմ ազգային-ազատագրական պատերազմները նկարագրելիս: Նվարսակի պայմանագրի կետերը, որոնք հայերի առաջարկով ընդունեցին պարսիկները, Չամչյանցը կրկնում է նույ-

նությամբ¹: XX դարի պատմաբանները՝ հայ և ոչ հայ, լայնորեն օգտագործել են Փարպեցու պատմությունը: Այն թարգմանվել է ռուսերեն ու եվրոպական լեզուներով: Առաջինը ֆրանսերեն թարգմանել է Վիկտոր Լանգլուան իր հայ պատմիչների գործերը ներկայացնող ստվարածավալ ժողովածուի երկրորդ հատորում²:

Ղազար Փարպեցուն, որպես պատմիչ, ամենաբարձր գնահատականը տվել է Միքայել Նալբանդյանը. «Արդարև, Փարպեցու պատմությունը շատ տեղ և մեծ մասով նմանություն ունի Տակիդոսի հոյակապ տարեգրությանց, թե իր անախտակիր ոգու և թե ճարտասանության մասին: Եվ մեզ թվում է, թե այս համեմատությունը էր ամենամեծ գովասանությունը, որ կարող էինք տալ Փարպեցու Պատմության, առանց վախենալու եվրոպական գիտության դատաստանից»³:

Մ. Նալբանդյանի այս գնահատականից հետո հետաքրքրությունը դեպի Փարպեցու պատմությունն ավելի է մեծանում: 1872-ի նոյեմբերի 27-ին Ստեփանոս Նազարյանցը նամակ է գրում Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցուն (1866-1882), որի մեջ խնդրում է իրեն ուղարկել Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» մի ընտիր օրինակ, այն գերմաներեն թարգմանելու համար, որովհետև Վենետիկում 1763 թ. հրատարակվածը քննական բնագիր չէ և լիքն է աղավաղումներով⁴:

Ուշագրավ է մեր ժամանակի նշանավորագույն ֆրանսիացի հայագետ Ժան-Պիեռ Մահեի՝ Փարպեցուն տված գնահատականը: Նա համեմատում է Ղազար Փարպեցուն և Գրիգոր Նարեկացուն՝ որպես երկու տարբեր դարաշրջաններում ապրած հոգևորական մատենագիրների, որոնք հալածվել են ժամանակակիցներից: Երկուսն էլ, ըստ հայագետի, տարբերվել են ժամանակի շրջապատող միջավայրից

¹ Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, հտ. Բ, Երևան, 1984, էջ 201:

² V. Langlois, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, T. 2, Première période, Historiens Arméniens cinquième siècle, Paris, 1869, pp. 259-368.

³ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հտ. 4, Երևան, 1983, էջ 334-335:

⁴ Ստ. Նազարյանց, Նամականի, տեքստը կազմեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց Ռուզան Նանուկյանը, Երևան, 1969, էջ 424:

իրենց բազմագիտակությամբ և նույնիսկ կասկածվել աղանդավորության մեջ, երկուսն էլ կարողացել են արդարացնել իրենց: Առաջինը հզոր քննադատական ոգով գրված թղթով, երկրորդը՝ նույնքան հզոր ու զայրալից թղթով՝ ուղղված Կճավա վանքի վանահորը⁵:

Փարպեցին շարունակում է Փավստոս Բուզանդի պատմությունը և իր շարադրանքը հասցնում է մինչև 484 թթ.: Գիրքը բաղկացած է առաջաբանից ու երեք դրվագներից: Ա դրվագն ավարտվում է Մաշտոցի մահով և իր ծավալով ամենափոքր հոգևորականների նահատակության տեսարանով ու երկարատև քսոթից հետո երանելի Աբրահամ երեցի Հայաստան վերադառնալով:

Երրորդ՝ Գ դրվագը, սկսվում է Վրաց Աշուշա բդեշխի խնդրանքով Վահան Մամիկոնյանի Պարսկաստանից ազատվելու փաստով և ավարտվում է Վահան Մամիկոնյանի՝ Հայաստանի վրա մարզպան նշանակվելով ու Հովհան Մանդակունի Ամենայն հայոց կաթողիկոսի այդ առթիվ արտասանած ճառով:

Իր պատմության առաջաբանում Փարպեցին ներկայացնում է, թե ինքը որտեղից է սկսում իր պատմությունը: Նա սկսում է այնտեղից, որտեղ կանգ է առել Փավստոս Բուզանդը. «Այս ամենը մի ոմն Փավստոս Բուզանդացի է պատմում՝ հասնելով մինչև Տիրանի որդի Արշակի թոռ և պապի որդի Արշակի թագավորությունը, որի տիրակալության օրերում Հայոց աշխարհը հնացած ձորձի նման պատռվելով՝ երկու ծվենի բաժանվեց: Հենց այստեղ իր պատմության խոսքն ավարտելով՝ հանգույցը փակում է Փավստոսը: Այս գիրքն էլ են կոչում Հայոց պատմություն»⁶:

Նա նաև հայտնում է, թե իր պատմության պատվիրատուն Մամիկոնեից տեր Վահանն է՝ սպարապետն ու մարզպանը Հայոց: Միջնադարի քրիստոնյա մատենագիրներին հատուկ համեստությամբ

⁵ Ա. Դոլուխանյան, Ժան-Պիեռ Մահեն հայագետ, Երևան, 2020, էջ 242-243:

⁶ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուրք Վահան Մամիկոնյանին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 7:

Փարպեցին խոստովանում է, թե ձեռնարկելու է մի գործ, որը վեր է իր գիտության ուժից⁷:

Նա հայտնում է, թե կգրի մի մատյան, որը գիտության օրենքի համեմատ կունենա վայելուչ և համապատասխան շարադրանք: Պատմիչը խոստանում է պատմության մեջ չավելացնել չեղած բաներ, չնվազեցնել եղածները, անփույթ չպատմել, այլ պատմական ճշմարտությունը երևան հանել ողջախոհ զգուշությամբ⁸:

Պատմիչը ցավով է նշում, թե Հայաստանը երկու մասի բաժանելու ընթացքում Մեծ Հայքի շատ գավառներ երկու մասերում էլ պոկեցին Մեծ Հայքից և յուրացրին: Նա փաստում է, որ Արշակունի թագավորները նստում էին Այրարատ նահանգում, և այդ թագավորանիստ նահանգի զարդը Արարատյան դաշտավայրն էր: Այստեղ էր աճում այն ամենը, ինչը կենսական նշանակություն ուներ մարդկանց համար: Լայնատարած մշակված դաշտեր, որում որսը լիքն էր, դաշտը շրջապատված էր գեղեցկանիստ լեռներով՝ փարթամ արոտավայրերով ծածկված, բազմատեսակ ու պիտանի կենդանիներով լեցուն: Լեռների բարձր կատարներից ջրեր էին հոսում, որոնք լիովի ոռոգմամբ արբեցնում էին դաշտերը: Այդ դաշտերը մարդկանց մատակարարում էին առատ հաց և գինի, անուշաբույր, մեղրահամ բանջարեղեն, յուղատու զանազան սերմեր: Այդպիսի բնական ուտելիքները որսասեր մարդկանց և բացօթյա ապրող հովիվներին պարգևում էին առողջություն և մտքի թարմացում: Դաշտում աճում էին պիտանի բույսեր, որոնց միջոցով հմուտ բժիշկները բուժում էին հիվանդություններն ու տառապածներին պարգևում առողջություն: Բայց այդ դաշտավայրը մարդկանց պարգևում էր նաև գետնի տակ թաքցրած գանձերը՝ ոսկին ու պղինձը, երկաթն ու թանկագին քարերը: Այդ թանկարժեք քարերը զարդարում էին թագավորների խույրերը, թագերը, ընդելուզում նրանց շքեղ հանդերձները: Նա խոսում է նաև դաշտում եղած որդան կարմիրի մասին, որը կարմրափայլ գույն էր տալիս զարդերին: Արարատյան դաշտում հոսում էին գետեր, որոնց մաքուր ջրերում կային

⁷ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, էջ 17:

⁸ Նույն տեղում:

ամեն տեսակի ու համի ձկներ: Նա թվարկում է բազմատեսակ թռչունների, որոնք շատ համեղ կերակուր էին դառնում մարդկանց համար: Մարդիկ որսում էին եղնիկներ, եղջերուներ, վարազներ:

Այս երանավետ նկարագրի մեջ ուշագրավ է նախարարների ու հասարակ շինականների ջերմ փոխհարաբերությունը: Երիտասարդ շինականներն իրենց կենդանիների և ձկների որսը սիրով կիսում էին իշխանների հետ, և դրա հետևանքով երկուստեք ուրախացած խնդում էին: Արարատյան գավառը Արշակունյաց տոհմի բնիկ սեփական կավածքն էր, իսկ Արշակունիների բնակավայր ուստանը Վաղարշապատն էր, որն ուներ անթիվ բարձրաբերձ շինություններ և Աստծու սուրբ հրեշտակի մատնացույց արած տեղում կաթուղիկե եկեղեցի⁹:

Փարպեցու պատմության երկրորդ հատվածը նոր լույս է սփռում Ավարայրի դեպքերի վրա: Փարպեցին ներկայացնում է, որ Հազկերտ Երկրորդը Տիգրանում է պահում Վասակ Սյունեցու երկու որդիներին և Աշուշա բղեշխին:

Կարևոր է նաև այն հատվածը, որում պատկերված է Վարդան Մամիկոնյանի ընտանիքի հեռացումը Արևելյան Հայաստանից դեպի Արևմտյան Հայաստան: Սպարապետին դեպի ապստամբություն մղում է Վասակ Սյունեցին, որն ապստամբության ցանկալի ելքի համար ամեն տեսակի քաղաքական միջոցներ էր ձեռնարկել: Ահա թե ինչ է ասում Վասակ Սյունեցին. «Անհրաժեշտ է անմիջապես ընտիր քահանաներից ու Հայոց ավագ տանուտերներից մի քանիսին ուղարկել Հայոց գորավար Վարդան Մամիկոնյանի ետևից և աղաչանքով նրան վերադարձնել այնտեղ, քանի որ առանց նրան մեր կամքն ու խորհուրդները չեն իրականանա»¹⁰:

Ավարայրի ապստամբությունից հետո Պարսից արքունիքը Սյունյաց տանուտեր է նշանակում դավաճան Վարազվաղանին, որը շատ կարճ ժամանակ անց սարսափելի հիվանդանում է: Այն, ինչ Եղիշեն պատմում է Վասակ Սյունեցու բանտում մարմնական սարսափելի քայքայման մասին, Փարպեցին նկարագրում է Վարազվաղանի

⁹ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, էջ 21-27:

¹⁰ Նույն տեղում, 135:

համար: Ըստ Փարպեցու՝ Վասակը երկար ժամանակ մնում է բանտում և այնտեղ էլ գտնում է իր վախճանը: Թե՛ Եղիշեն և թե՛ Փարպեցին ներկայացնում են այն ծանր տուգանքները, որոնք Պարսից պետությունը դնում է Վասակի վրա: Պարզ է դառնում, որ Վասակը նախապես եղել է ապստամբության նախաձեռնողը. «Անմիջապես ու շուտափույթ նամակներ գրեցին կայսրին, Հունաց արքունիքի ամենայն ավագանուն և ուրիշ իշխանների ու կուսակալների, Աղձնյաց բղեշխին, Անգեղ տան իշխանին, Ծովք, Հաշտյանք, Եկեղիք և այլ գավառների մյուս իշխաններին ու Անտիոքի մեծ սպարապետին»¹¹: Այս նամակներից մեկի պատճենն, ըստ Եղիշեի, Ատոմ անունով մի իշխան Վասակի դատավարության ժամանակ ներկայացնում է Պարսից արքային. «Ինչպես նաև մի նախարար, որի անունն Ատոմ էր, Գնունյաց ցեղից, որին նա պատգամավոր էր ուղարկել հույների մոտ, առաջ եկավ և մեղադրեց նրան մեծ ատյանի առաջ հենց այն հրովարտակով, որ նա տվել էր՝ կնքած իր մատանիով»¹²:

Փարպեցու պատմության երրորդ դրվագը ամենաարժեքավորն է. այն եզակի սկզբնաղբյուր է հետագայի հայ պատմագրության ու պատմագիտության համար:

Հովհան Մանդակունի Ամենայն Հայոց կաթողիկոսի (478-490 թթ.) մասին եզակի փաստեր է հաղորդում Փարպեցին իր պատմության երրորդ դրվագում: Մանդակունին եղել է Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից, բարձրագույն կրթություն է ստացել հունական նշանավոր կենտրոններում, սերում է նախարարական տոհմից: Նրա հորեղբայրը եղել է Գյուտ Ա Արաքեզացին, որը որպես Ամենայն Հայոց կաթողիկոս նախորդել է Մանդակունուն (461-478 թթ.): Մանդակունին եղել է նաև մատենագիր ու թարգմանիչ: Նրանից հասել են ճառեր ու հոգևոր երգեր¹³:

¹¹ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, էջ 149:

¹² Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 269:

¹³ Հովհան Մանդակունու մասին մանրամասները տե՛ս Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002, էջ 613-614:

Փարպեցին նկարագրում է, թե ինչպես է Վահան Մամիկոնյանի ապստամբության ժամանակ Մանդակունին ոգևորել հայ զինվորներին ճակատամարտից առաջ. «Մուրբ Հռիման կաթողիկոսը Հայոց բովանդակ գորքին կարգադրեց ամբողջ գիշերը ջերմեռանդ աղոթքներով պարապել և մարդասեր Փրկչից խնդրել բարձր պահելու իր մեծ անունը՝ հավաքված հեթանոսների բազմության մեջ, իր ծառաներին արժանացնել պարծանքի բաժնին, իսկ ուրացողների դասին բաժին հանել ամոթը: Եվ հենց այդպես էլ Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը սքանչելի ասպետ ու մարգպան Սահակը և Հայոց ամբողջ զորքը միահամուռ ու միասիրտ, հորդորալից հոգով խնդրում էին Աստծո ոգևորությունը, կատարում սահմանված գիշերային ժամերգությունը»¹⁴:

Երկրորդ ապստամբության ժամանակ իր խիզախությամբ փայլել է Սահակ Բագրատունին՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեկենասը: Եթե չլինեք Սահակ Բագրատունին, մենք այսօր չէինք ունենա Խորենացու հանճարեղ մատյանը, որը ներկայացնում է հայ ազգի ծագումնաբանությունը և մեր պատմական ընթացքը հասցնում է մինչև 428 թ., իսկ պատմության վերջում դրված Ողբով այն հասնում է մինչև 450-ական թվականները: Սահակ Բագրատունին եռանդուն ձևով մասնակցել է պարսիկների դեմ մղված ազգային-ազատագրական կռիվներին ու հերոսաբար գոհիվել 482 թ.՝ երիտասարդ հասակում: Փարպեցին մշտապես հիացմունքով է խոսում այդ հայրենասեր իշխանի մասին. «Եվ երանելի ասպետ Սահակին ու Սյունյաց Բարգենին էլ իր ու Բարշղի արանքում կանգնեցրեց»¹⁵:

Փարպեցու պատմության մեջ կա մի դրվագ, որը ներկայացնում է հայ ազնվական կանանց բարոյական մաքրությունը և հայկական ընտանիքի անձնագրի նվիրումը միմյանց նկատմամբ:

Պարսից Հազարավուխտ զորավարն ամեն կերպ ջանում է բռնել Վահան Մամիկոնյանին ու պատժել: Վահան Մամիկոնյանը կարողանում է իր զորքով խույս տալ: Հազարավուխտը, չկարողանալով բռնել

¹⁴ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, էջ 313:

¹⁵ Նույն տեղում, էջ 325:

Վահան Մամիկոնյանին, հայ ռամիկների մեծ կոտորած է կազմակերպում և բռնում է Շիրակի տեր Ներսեսի ու Հրահատի կանանց, տանում Պարսից բանակը՝ նախապես զգուշացնելով նրանց պահել ըստ քրիստոնեական պատվի¹⁶: Այդ կանայք իրենց պահում են անբասիր վարքագծով՝ հավատարիմ մնալով իրենց սիրեցյալ ամուսիններին:

Ղազար Փարպեցին խստորեն դատապարտում է դավաճան նախարարներին: Այդ դավաճանները, Հայաստանի ընդհանուր շահերը ոտնահարելով, անցնում էին պարսիկների կողմը՝ ակնկալելով նրանցից ստանալ պաշտոն, պատիվ, ուրիշների տները և ունեցվածքը: Ցավալին այն է, որ այդպիսի դավաճան ու խաբեբա մարդիկ նույնը սովորեցնում էին իրենց զավակներին: Խորին վշտով Փարպեցին արձանագրում է, որ նման դավաճան ու խաբեբա մարդկանց պատճառով Հայաստանից վերացել ու կորել էին վաստակը, խելքը, քաջությունը, տոհմիկությունն ու արդարությունը, և ասպարեզ էր մտել այդ բոլորի այլակերպված դեմքը:

Պարսիկները դավաճան հայերին մղում էին ազգադավ գործերի, որոնք կատարվում էին ըստ իրենց հրահանգի ու հետո այդ ամենի համար ծաղրում էին դավաճան հայերին՝ նրանց արատը վերագրելով ողջ ազգին:

Նշելով իր հայրենիքի որոշ մարդկանց ազգադավ գծերը, պատմիչը մտածում է Հայաստանի փրկության մասին:

Փարպեցին Վահան Մամիկոնյանին վերագրում է Հայաստանի արժանապատվությունը պաշտպանող այնպիսի խոսք, որը նրա անձի նկատմամբ հարգանք է առաջացնում պարսիկների մոտ:

Չար և նենգ Պարսից Պերոզ արքան սպանվում է հեփթաղների դեմ մղված պատերազմում, և նրա փոխարեն Պարսից գահին նստում է Վաղարշ թագավորը: Նա շտապում է հայերի հետ կնքել հաշտության պայմանագիր:

Վահանը Պարսից ավագանու և Վաղարշ թագավորի մոտ այնպես է ներկայացնում Հայաստանի համար առաջնահերթ պահանջներ-

¹⁶ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, էջ 253:

րը, որ բոլորը բարձրաձայն գովում են նրան և ընդունում որպես քաջի¹⁷: Պարսիկները հասկանում են, որ ապստամբ Վահան Մամիկոնյանին պետք է ընդունեն որպես Հայաստանի մարգպան և սպարապետ: 484 թ. Նվարսակ գյուղում կնքվում է պայմանագիր, որի առաջին երկու կետերը խիստ կարևոր էին Հայաստանի համար:

Առաջին կետով հայերն իրավունք էին ստանում ազատորեն պաշտել քրիստոնեությունը, զրադաշտական կրակարանները հեռացվում էին Հայաստանից, քրիստոնյա մարդկանց և քահանաներին թույլ էր տրվում քրիստոնեական կարգն ու պաշտոնը համարձակ և աներկյուղ կատարել, ուր որ կամենան¹⁸:

Երկրորդ պահանջն այն էր, որ ճիշտ ճանաչեն տոհմիկին և անտոհմիկին, օգտակար մարդկանց ճիշտ գնահատեն, արհամարհեն վատին ու անպիտանիին, պահեն իմաստուններին և լսեն նրանց խորհուրդները: Իսկ երրորդ պահանջն այն է, որ Արյաց աշխարհի թագավորը որևէ մեկի մասին ուրիշի ասածով կարծիք չկազմի, այլ հենվի միայն իր աչքով տեսածի ու իր ականջով լսածի վրա:

Ըստ Նվարսակի պայմանագրի՝ Հայաստանը լիովին ստանում է ներքին ինքնավարություն: Վահան Մամիկոնյանը մի խումբ նախարարների հետ մեկնում է Պարսկաստան, արժանանում Վադարշ թագավորի արժանապատիվ ընդունելությանն ու վերադառնում հայրենիք: Փարպեցու պատմությունն ավարտվում է Հովհան Մանդակունու՝ օրհնյալ բովանդակություն ունեցող ճառով:

Եզրակացություն

Ղազար Փարպեցին Ոսկեդարի (V դար) վերջին պատմիչն է, որից հասել են երկու գործեր՝ «Հայոց պատմությունը» և «Թուղթը»՝ ընդդեմ ստալիսոս աբեղաների: Եթե «Թուղթ»-ը մեզ է հասել միայն մեկ օրինակով, ապա «Հայոց պատմություն»-ից միայն Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է վեց օրինակ: Հավանաբար միջնադարում հոգևորականների դեմ ուղղված խիստ քննադատության պատճառով Փարպեցու մեծարժեք «Թուղթ»-ը շատ չի բազմացվել:


¹⁷ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, էջ 407:

¹⁸ Նույն տեղում էջ 391:

Փարպեցու «Հայոց պատմություն»-ը ներկայացնում է հայ միջնադարյան պատմագրության պաշտոնական ուղղությունը: Պատմության առաջաբանում Փարպեցին իրեն համարում է V դարի հայ գրականության երրորդ պատմիչը՝ Ագաթանգեղոսից ու Փավստոսից հետո: Եթե նա հիացած է Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» մատյանով, ապա Փավստոսի համանուն երկը խիստ քննադատում է: Պատճառն այն է, որ Փավստոս Բուզանդն իր գիրքը գրել է ժամանակի խոսակցական լեզվին առավել մոտ ոճով, օգտագործել է բառեր, որոնք ընդունված չէին հինգերորդ դարի դասական հայ մատենագրության մեջ: Փարպեցին չի գրել հայ ժողովրդի ամբողջական պատմություն: Նրա երկն ընդգրկում է մոտ մեկ դարի պատմություն: Ագաթանգեղոսը գրել է քրիստոնեության մուտքի պատմությունը, Բուզանդը շարունակել է Ագաթանգեղոսին, իսկ Փարպեցին՝ Բուզանդին: Այդ պատճառով նա չի խոսել Մովսես Խորենացու «Հայոց պատմության մասին», որն ամբողջական է՝ սկսվում է հայ ազգի կազմավորումից՝ Հայկ Նահապետից և հասնում մինչև 428 թ., իսկ գրքի վերջում դրված «Ողբով»՝ մինչև 450-ական թվականները: Փարպեցու պատմության երեք մեծ հատվածներից առավել արժեքավոր են երկրորդն ու երրորդը: Երկրորդ մասը պատմում է Ավարայրի հերոսամարտի դեպքերը և հաղորդում է կարևոր փաստեր, որոնք չկան Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» դյուցազներգության ոճով գրված, սակայն պատմական մեծարժեք երկում:

Փարպեցու պատմության երրորդ հատվածը սկզբնաղբյուր է հետագայի հայ պատմագրության համար: Այն ներկայացնում է հայերի ազգային-ազատագրական պայքարը 482-484 թթ.՝ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ, որն ավարտվում է հայերի հաղթանակով: Վահան Մամիկոնյանը ճանաչվում է Հայաստանի մարզպան և սպարապետ, ու Հայաստանը ստանում է ներքին ինքնավարություն:

Փարպեցու «Հայոց պատմություն»-ը թարգմանվել է ռուսերեն ու եվրոպական տարբեր լեզուներով: Միքայել Նալբանդյանը հիացած է Փարպեցի պատմիչով և նրան համեմատել է հռոմեացի պատմիչ Տակիտոսի հետ:



ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

*Խ. Արույանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետի դեկան,
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅՈՒ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ. «ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՆՎԱՐԱԳԻՐԸ», «ՆՎԱՐՄԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ»

Ներածություն

Պատմական և գիտական առումով զգալի արժեք ունի Ղազար Փարպեցու «Պատմություն Հայոց» երկը, որի մեջ եղած փաստերից երևում է, որ Վահան Մամիկոնյանը ոչ միայն պատվիրել է, այլև հեղինակին փոխանցել է ապագա գրքի տեղականը: Վահան Մամիկոնյանն առաջարկում է շարունակել Փավստոս Բուզանդին և շարադրել IV դ. վերջերի և V դ. Հայաստանի քաղաքական ու եկեղեցական պատմությունը: Այս ամենն իրագործելու համար պատմիչը պետք է լրջագույն նախապատրաստական աշխատանքներ ի կատար ածեր, ծանոթանար կարևոր սկզբնաղբյուրներին՝ չբավարարվելով միայն հայատառ աղբյուրների տվյալներով:

«Պատմություն Հայոց» երկը բաղկացած է երեք գլխից կամ մասերից, որոնք կոչվել են նաև դրվագներ¹: Գիրքն ունի փոքրիկ առաջա-

¹ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխայանցի, Երևան, 1982, 540 էջ:

բան, որտեղ հեղինակը բարձր է գնահատում Ագաթանգեղոսին և Փ. Բուզանդին, տալիս նրանց աշխատանքների սեղմ բովանդակությունը, արժևորում դրանք: Այս գրքերը դիտարկելով առաջին և երկրորդ պատմություն՝ իր աշխատությունը համարում է երրորդը և շարունակում պատմիչներին: Նա օգտագործում է այլ աղբյուրներ, քաղաքներում ականատեսների վկայություններ, յուրովսանն պարզում դրանց հավաստիությունը և նոր շարադրում փաստերը: Նրա պատմությունն աչքի է ընկնում ճանաչողական մեծ արժեքով, որովհետև նրանում հայ իրականության ճշմարտացի պատկերն է²:

Ղազար Փարպեցու գրքի Ա. դրվագի հիմնական աղբյուրներն են կազմում Ագաթանգեղոսի, Կորյունի, Խորենացու պատմությունները և «Աստվածաշունչը»: Բ. դրվագի նյութի առավել մասը հեղինակը քաղել է Եղիշեի «Վարդանանց պատմություն»-ից՝ ընդսմին օգտագործելով Սուրբ Գիրքը: Նրա «Պատմության» մեջ ինքնուրույն սկզբնաղբյուր է Գ. դրվագը, որով նա կարող է ամենապատվավոր տեղը զբաղեցնել հայ դասական պատմիչների շարքում:

Ճարտարախոս Փարպեցին V դարի հայ դասական մատենագիրների շարքի փայլուն հեղինակներից է:

Քննարկում

Մեր նպատակն է ուրվագծել Ղազար Փարպեցու «Պատմության»՝ «Այրարատյան դաշտի նկարագիրը» և «Նվարսակի պայմանագիրը» հատվածների լեզվառճական առանձնահատկություններն ու հիմքերը³: Գրաբարյան գրական կոթողների լեզվական ուսումնասիրությունը նպաստում է հին հայերենի գիտական նկարագիրն առավել համապարփակ դարձնելուն:

Հայտնի է, որ V դարի հայերենն իր առաջին գրական մկրտությունն ստացավ թարգմանական գրականության ավագանում: Գրա-

² Ա. Դուլիսանյան, Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, Երևան, 2012, էջ 35:

³ Այրարատյան դաշտի նկարագիրը գետեղված է առաջին դրվագում (էջ 20-24), իսկ Նվարսակի պայմանագիրը՝ երրորդ դրվագում (էջ 388-392):

կանության առաջին ստեղծողները չէին կարող անմիջապես ինքնուրույն երկեր գրել: «Նրանց անհրաժեշտ էր ուսումնառության մի որոշ ժամանակաշրջան, մինչև որ վարժվեին գրելու տեխնիկային և արվեստին և հունի մեջ մտնեին»⁴:

Ուսումնասիրելով «Պատմության» փայլուն էջերը՝ նկատում ենք, որ ակտիվություն են դրսևորում հատկանունները, անձնանունները՝ *Աստուած, Արշակ թագաւոր, Նիխոր, Վահան Մամիկոնեան, Վաղարշ թագաւոր, դպիր Շապուհ*, տեղանունները՝ *զգաւառն Այրարատու, աշխարհ Հայոց, դաշտն Այրարատոյ, Հեր գաւառ, Նուարսակ (գյուղ), Արեւց աշխարհ* և այլն:

Քննվող հատվածներում նկատելի է բնութագրական բառերի (որոշիչների) առատ գործածություն, այսպես՝ *զբարի և զբնիկ* ժառանգութիւն, *զգաւառն* Այրարատու, *զհոյակապն* և *զհռչակաւորն* և *զակաւաւորն*, *զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն* բանջարացն և այլն:

Կենդանիների անուններից էշ և ձի գոյականները մատենագրության մեջ հաճախ ավանդվել են *–ան* հոգնակիակազմիչով: Փարպեզու «Պատմության» հատվածներում հիշյալ բառերն ունեն ձևաբանական հետևյալ հարացույցը՝ հայց.՝ զծիանս, սեռ.՝ իշանց, այսպես՝ «որոց թանձրախիտ աճմունք խոտոցն զանթիւ արօտականս ընդանի իշանց և զանհամբոյր բոլս վայրենի երեոցն յազեցուցեալ... » (էջ 20):

Նշենք, որ Ա. Այտընյանը վերջիններս ներառում է Ղազար Փարպեցու *–եան* վերջավորությամբ հոգնակիների շարքում, իսկ Վ. Առաքելյանն առանձնացնում է *–ան* հոգնակիակերտ մասնիկով բառաձևեր⁵:

⁴ Վ. Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1984, էջ 8:

⁵ Տե՛ս Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Երևան, 1987, էջ 80: Ղազար Փարպեցու լեզվի վերլուծությամբ զբաղվել է Ա. Այտընեանը: Պատմության բառապաշարը քննելիս նա անդրադարձել է գործածության տարբեր հաճախականություն ունեցող բառերի իմաստային և քերականական դրսևորումներին: Տե՛ս նաև Վ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981, էջ 208:

Հատկանշական է, որ հոգնակերտ մասնիկների շարքում (օրինակ՝ ք-ով ձևերը, *արմատք* բուսոց...) Փարպեցին գործածել է նաև *-եր* մասնիկը՝ *բաներ*, *հարկեր*, *ձեռներ* և այլն:

Փարպեցու պատմության մեջ ի հայտ են գալիս և այլ հոգնակերտ մասնիկներ, որոնք իրապես բարբառային ներթափանցման արդյունք են: Գ. Ջահուկյանը սրանք համարում է «գրաբարի համար ոչ տիպական և բարբառներում, միջին հայերենում ու նոր գրական հայերենում տարածված հոգնակերտներ»⁶:

-Ություն ածանցը հայոց լեզվի պատմության բոլոր փուլերում դրսևորել է բառակազմական ակտիվություն. այդպես է նաև Փարպեցու լեզվում՝ մարդկային պիտոյիցս կենաց և *վայելչութեան* և *սթափութեան*, տոնքացեալսն *գիրութեամբ* զբնաւ մարմինն ցուցանեն, ընձեռելով *առողջութիւն*, այսր աշխարհիս ի *մեծութիւն* թագաւորաց, զառաւելութիւն հաւուցն յուրախութիւն և ի սթափումն որսատենչ ազատացն, նուաճել զձեզ *խաղաղութեամբ*, *խնդութեամբ* մեռցուք, զայս երիս *ընտրութիւնս*, *ծառայութիւն* առնել: Պետք է սակայն արձանագրել, որ Փարպեցին այս ածանցով կերպավորել է նաև այլ միավորներ՝ *ախորժայրութիւն*, *աշխարհաշինութիւն*, *լուսափայլություն* և այլն:

Քննվող հատվածում ակտիվ է *սեր* բաղադրիչով բարդությունների գործածությունը՝ *առապարասեր*, *որսասեր*, *եղեգնասեր*, *աղօթասեր*, *օգտասիրացն* և այլն:

Փարպեցին հաճախ է կիրառում *իրք*, *թող*, *պիտի*, *ունիմ*, *կայ*, *մարդ* բառերը, որոնք գործածության մեջ կանոնիկ լեզվի նորմավորում չեն և, կարելի է ասել, թողնում են աշխարհաբարյան խոսքի տպավորություն և արտահայտչություն:

Պատմիչը կազմել է կրոնական-եկեղեցական մի քանի բառեր՝ *առաքելակրօն*, *աստուածաբար*, *աստուածագիւտ*, *աստուածաշնորհ*, *եկեղեցագարդ* և այլն: Փարպեցու բառապաշարի մեջ օտար բառերի կիրառությունը չնչին է (առկա են հունարենի և եբրայերենի որոշ

⁶ Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը, Երևան, 1959, էջ 220:

ազդեցություններ): Պատմիչն այնպիսի բառերից է օգտվել, որոնք իրենից առաջ և իր ժամանակին գրական լեզվում մեծ մասամբ սովորական են եղել: Գիտական գրականության մեջ Փարպեցին ներկայացվել է ամենից շատ ժողովրդախոսակցական լեզվական տարրերի հեղինակ⁷: Պատմիչի ժողովրդախոսակցական բոլոր ձևերը սովորաբար հանդես են եկել տրամախոսությունների մեջ, օրինակ՝ Վահան Մամիկոյան-Նիխոր հատվածում: Ժողովրդախոսակցական այդ ձևերը որոշ լեզվաբաններ «կոկ և մաքուր աշխարհաբար» են դիտարկում (Ա. Այսնեան):

Մ. Աբեղյանը Ղազար Փարպեցու ոճի բուն հատկանիշը համարում է ճարտասանությունը⁸: Այն, ինչ որ ուրիշ հեղինակներ իրենց կողմից կպատմեին, պատմագիրը՝ իբրև ճարտասան, հաճախ գործող անձերի միջոցով է հաղորդում: Արշակին նվիրված հատվածը և՛ հեղինակային պատմություն է, և՛ ներքին մենախոսություն, ուր երևում է արքան հոգեկան դրամայով Արարատյան դաշտի պատկերավոր նկարագրության տիրություն: Ղ. Փարպեցին բացում է Արարատյան դաշտի գեղեցկությունը, գրիչը ջերմանում է Աստծու և մարդու կողմից ստեղծված հարստության առջև: «Արարատյան դաշտի նկարագիրը» հատվածում հեղինակը լեզվառճական վառ գույներով պատմում է օտարի տիրապետության տակ մնացած Արարատյան դաշտի գեղեցկության ու բարիքների մասին. «Յորոց ի վերուստ ի կատարացն ջրոց հոսմունք, անկարօտ ոռոգման արբուցանելով զդաշտս՝ մատակարար է անբաւ բազմութեամբ յոսանն, կանամք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւն բանջարացն և զգանազանումն իւղաբուխ սերմացն» (էջ 20-21):

⁷ Վ. Առաքելյան, Նշվ. աշխ., էջ 204: Վ. Խաչատրյան, Ղազար Փարպեցու լեզուն, սեղմագիր, Երևան, 2008, էջ 11:

⁸ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա., Երևան, 1944, էջ 337:

Այս ոգեշնչումով պատմիչը քաղաքական իրավիճակի առթիվ տեսնում է մարդու և բնակավայր-ոստանի ներքին կապը՝ նկարագրությունը ողողելով ջերմ հույզերով ու ապրումներով:

Ինչպես նկատում ենք, «Պատմությունը» հարուստ է պատկերավորությամբ աչքի ընկնող հատվածներով, որոնք և բնագրին հաղորդում են գեղարվեստականության ուրույն գծեր: Ճիշտ է, Փարպեցու երկը չի կարող համեմատվել Եղիշեի արձակի պատկերավորման համակարգի, լեզվի ռիթմիկ զգացողության հետ⁹, բայց և այնպես Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ը զգալի դեր է կատարել հայոց գրական լեզվի զարգացման պատմության մեջ:

Այս իմաստով կարող ենք շեշտել, որ պատմիչը տալիս է իրապատում արձակի նորագույն նմուշներ: Քննելով երկու հատվածները՝ համոզվում ենք, որ հեղինակն ըստ կարելիության կարողացել է տալ հոգեբանական և նկարագրական ձիրքի լուրջ նմուշներ, գեղարվեստի փայլուն էջեր: Մ. Նալբանդյանը բարձր է գնահատել Փարպեցուն՝ նրան համեմատելով համաշխարհային հռչակ ունեցող լատին պատմիչ Տակիտոսի հետ, որն իր փաստագրական պատմության մեջ պահպանել է գրականության ուրույն ձևերը¹⁰:

Ուսումնասիրելով քննվող հատվածների լեզվական հիմքերը՝ զգալի է, որ հեղինակը քաջաձանոթ է ոչ միայն Աստվածաշնչին ու եկեղեցական թարգմանական գրականությանը, այլև իրենից առաջ գրված հայ ինքնուրույն երկերին:

Ղ. Փարպեցին մեծագույն սիրով է կատարել իր մեկենասի հորդորը՝ սերունդներին իբրև ժառանգություն թողնելով իր անմահ գիրքը, որը հայ պատմագրության խոշորագույն երկերից է: Այստեղ հեղինակն ըստ էության դավանել է լեզվառձական առաջադիմական սկզբունքներ:

⁹ Մ. Մկրյան, Հայ հին գրականության պատմության, Երևան, 1976, էջ 264:

¹⁰ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 4, Երևան, 1983, էջ 334:

Եզրակացություն

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք հետևյալ եզրակացությունների հանգել՝

1. Ղազար Փարպեցին գրական լեզուն հարստացրել է տասնյակ բառերով:

2. Փարպեցու երկում նոր փոխառություններ չեն հանդիպում:

3. Փարպեցին V դարի այն եզակի գրողներից է, որ նպատակադրվել է բնության գեղարվեստական նկարագրությունն իր ընթերցողին ներկայացնել հոգեբանական հիմքերով:

4. Ղազար Փարպեցին խոսքը օժտում է փոխաբերություններով, համեմատություններով և հակադրություններով:

5. Փարպեցու պատմությունը գրված է հարազատ հայկաբանությամբ. լեզուն ճոխ է և դյուրըմբռնելի:



ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Խ. Արքովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան գրականության և
նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի դոցենտ,
Մաշտոցի անվան Մատենադարանի
Ձեռագրագիտության բաժնի
ավագ գիտաշխատող,
Բանասիրական գիտությունների թեկնածու*

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ԹՈՒՂԹ ԱՌ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ» ԵՐԿՐ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

Սուրբ Գրքի և միջնադարյան հայ մատենագրության կապի քննությունը հայագիտության առանցքային հարցերից է: Ոսկեդարյան մատենագրության սուրբգրային քաղումները հնարավորություն են տալիս աստվածաշնչյան բնագրի վերաբերյալ դիտարկումներ անկել կոնկրետ՝ Ե. դ. ժամանակային կտրվածքում. պատասխանել Աստվածաշնչի հայերեն՝ Սահակ-մաշտոցյան թարգմանության հանգամանքների, մայր բնագր(եր)ի, կանոնի ձևավորման ու սահմանների հետ կապված կնճռոտ հարցերին և կարող են իրենց նպաստը բերել քննական բնագրի կազմման աշխատանքներին:

Սույն հոդվածի քննության նյութը Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» (այսուհետև՝ Թուղթ) երկի և Աստվածաշունչ մատյանի կապի քննությունն է: Ղազար Փարպեցու Թղթի տար-

բեր հրատարակությունների¹ շարքում կարևորագույնը Պատմության և Թղթի քննական բնագիրն է². այս տպագիրների սահմաններում էլ կքննենք մեզ հետաքրքրող հետևյալ հարցերը՝ ա) տարբերակված են արդյոք սուրբգրային քաղումները, բ.) տարբերակված են անվանապե՞ս, ուղի՞ղ, թե անուղղակի ձևով, գիտակա՞ն են՝ ունեն լրացուցիչ բացատրություններ, կազմողի դիտարկումներ, տարբերություններ և այլն, գ.) Աստվածաշնչի ո՞ր գրքերն են հիշատակվում անվանապես, դ.) կա՞ն արդյոք տարբերություններ Աստվածաշնչի ընկալյալ՝ Հ. Ջոհրայանի (1805 թ.) բնագրից, ե.) կարելի՞ է կապ տեսնել Ղազարի անձնական ողբերգության և Թղթի սուրբգրային հղումների միջև:

Ոսկեդարյան մատենագիրների, այդ թվում և Ղազար Փարպեցու երկերի սուրբգրային քաղումները գրավել են օտար ուսումնասիրողների ուշադրությունը: Ս. Վեբերի «Աստուածաշունչ գրոց յարգն առ նախնի հայս» (“Zur Geltung der heiligen Schrift bei den alten Armeniern”) ուշագրավ հոդվածը վերհանում է այդ քաղումները՝ սուրբ-

¹ Նշում ենք Թղթի քննական բնագրին նախորդողները. Ղազարայ Փարպեցու Թուղթ առ Վահան՝ տե՛րն Մամիկոնեից. ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, տեսուչ Լազարեանց ճեմարանի Արեւելեան լեզուաց, Մոսկվա, Ի տպարանի Վլադիմիրայ Գոտիե, 1853, Թուղթ, 68 էջ: Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, հրատ. Հ. Ալիշան, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1873, ՌՅԲԲ., 11 չհ., 639 էջ: Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, երրորդ տպագր. («Հնտիր մատենագիրք Է»), Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1891-ՌՅԲ., ԺԷ., 719 էջ: Ղազար Փարպեցու Պատմության և Թղթի բնագրագիտական քննությունը և լրամշակված մատենագիտությունը տե՛ս **Գեորգ Տեր-Վարդանեան**, Ղազար Փարպեցու Հայոց պատմության եւ Թղթի տպագիրների բնագրական վիճակը, Էջմիածին, 2016, թ. Ը., էջ 77-110:

² Ղազարայ Փարպեցու պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ **Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Մախասեան**, Տիփլիս, արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, 1904, 4 չհ., ԺԶ., 211, 3 չհ. էջ (հոդվածում այս հրատարակությունը՝ «Թուղթ» ձևով): Նույնությամբ արտատպված Մատենագիրք Հայոց, հտ. Բ., Ե. դար, Անթիլիաս, 2003, էջ 2377-2394 (հոդվածում՝ «ՄՀ, Թուղթ», էջահամարները՝ շարադրանքի մեջ՝ փակագծերում): Բնագրի հիմքը Մաշտոցյան Մատենադարանի Հ^{մբ} 2639 (1672 թ.) ձեռագիրն է:

գրային հին հայկական կանոնի պատկերն ստանալու-ամբողջացնելու նպատակով³: Պարզեցինք, սակայն, որ Վեբերի հոդվածում արտացոլված չեն Ղազար Փարպեցու Թղթի բոլոր քաղումները. այս բացթողումը, կարծում ենք, պայմանավորված է նրանով, որ հոդվածը գրելու ժամանակ Ղազար Փարպեցու Թղթի քննական բնագիր դեռ հրատարակված չէր:

Մինչև 1904 թ. Թղթի քննական բնագրի ի հայտ գալը հրատարակված տարբերակները գրեթե ոչինչ չեն տրամադրում սուրբգրային քաղումներն ուսումնասիրելու առումով: Բացառություն է կազմում վենետիկյան 1891 թ. հրատարակությունը, որտեղ սուրբգրային քաղումները բնագրից առանձնացված-տարբերակված են չափերստներով՝ առանց անվանական հիշատակման: Ուստի հասկանալի է Հ. Տաշյանի մտահոգությունը 1904 թ. քննական բնագրի⁴ առիթով գրված գրախոսականի մեջ⁵:

³ Աստուածաշունչ գրոց յարգն առ նախնի հայս (ըստ պր. Ս. Վեբերի թրգմ. Հ. Ստեփանոս Սարբեան), Բազմավեպ, Վենետիկ, 1897, թ. Դ., էջ 167-9, թ. Է., էջ 311-3, թ. Թ., էջ 408-11: Այս հոդվածների դրույթների և գիտական արժեքի մասին տես Месроп Тер-Мовсесян, История перевода библии на армянский язык, С. Переводы, 1902: Հայերեն թարգմանությունը՝ Մեսրոպ արք. Տեր-Մովսիսեան, Պատմութիւն Սուրբ Գրոց հայկական թարգմանութեան, ռուսերենից թարգմ.՝ **Սուսաննա Նահապետեան**, առաջաբ., խմբ. եւ ծանօթ.՝ **Գեորգ Տէր-Վարդանեան**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2018, էջ 216-218:

⁴ Պատմագիրք Հայոց, ի լոյս ընծայեալ բաղդատութեամբ ձեռագրաց ի ձեռն բանասիրաց Հայոց, հտ. Ա., գիրք Դ., Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ **Գ. Տէր-Սկրտչեան եւ Ստ. Մալխասեան**, Տիփլիս, 1904, ԺԶ+215 թ., Թուղթ, էջ 185-204: Ղազար Փարպեցու Թղթի ձեռագրերի և տպագիրների մասին տես Ղազար Փարպեցի, Մատենագիտութիւն, կազմ.՝ **Տիգրան Գույումձեան**, Երևան, 1999:

⁵ «Մեծապէս գովութեան արժանի կը համարինք..., որ Ս. Գրոց կոչմանց տեղերը մի առ մի նշանակուած են թէ՛ իւրաքանչիւր տեղը եւ թէ՛ յետոյ առանձին ցուցակով (էջ 213-4): Բայց... լիջուած են միայն բուն կոչմունքն որոնք իբրեւ այնպիսի յառաջ կը բերուին Հեղինակէն, ուստի դուրս ձգուած են կամ չեն նշանակուած «այն տեղերն, որոնք բնագրում չեն բերուած իբրեւ վկայութիւն, այլ ինչպէս խօսողի սեպիական խօսքեր»: Կը բաղձայինք որ այսպիսիներն ալ գոնէ առանձին կերպով մը նշանակուէին, վասն զի նաեւ ասոնք՝ թէւ իբրեւ

Կասկածից դուրս է՝ Ղազար Փարպեցու Թղթի քննական բնագիրը (նույն՝ ՄՀ, Թուղթ) նույնպես սուրբգրային հղումների ամբողջական պատկերը չի արտացոլում⁶: Մեր եզրակացությունը հետևյալն է՝ Ղազար Փարպեցու Թղթի գրաբար բնագրերը, այդ թվում և քննականը, աստվածաշնչյան քաղումների ամբողջական-ամփոփ պատկեր չեն ներկայացնում, և նրանց ուսումնասիրությունը ցարդ լուծելի խնդիր է: Այդ աշխատանքը Թղթի քննական բնագրի կազմողները (Գ. Տեր-Մկրտչյան, Ստ. Մալխասյան) իրականացրել են մասամբ: Առավել մանրամասն, սակայն ոչ ամբողջությամբ (կիսատ է թողել)⁷՝ հարցին անդրադարձել է Մ. Նալբանդյանը, որի քննական թարգմանությունը գիտական արժեք ունի իր ծավալուն և մանրամասն ծանոթագրություններով⁸: Գիտական բարեխղճությամբ արված այս գործը բացա-

ազատ խօսք՝ բառական կոչմունք չեն, միշտ մեծ ծառայություն կրնան մատուցանել Մ. Գրոց հնագույն բնագրի համեմատական քննութեան եւ այն կարգի խնդրոց համար»: Տե՛ս **Հ . Յ. Տաշեան**, Մատենախօսական. Պատմագիրք Հայոց. Դ . Փարպեցի, Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1904, թ. Ը.-Թ., էջ 228:

⁶ «Սուրբ Գրքից բերուած հատուածների տեղերը նշանակելիս՝ ընդհանրապէս զանց եմ արել նշանակել այն հատուածների տեղերը, որոնք բնագրում չեն բերուած իբրեւ վկայութիւն, այլ ինչպէս խօսողի սեփական խօսքերը».- խոստովանում է Ստ. Մալխասյանը. Ղազար Փարպեցի (1904), էջ ԺԲ.:

⁷ Նալբանդյանի Թղթի սուրբգրային քաղումների ուսումնասիրության ամբողջականությունը կասկած է հարցում. բավականին ծավալուն հատված (վերջինը՝ ծնթ. 77) մնում է առանց ծանոթագրման (Նալբանդյան, Թուղթ, էջ 313-322): Ուստի Թղթի թարգմանության առաջին հրատարակիչ Մ. Տեր-Գրիգորյանի ակնարկը «Թարգմանչի բացատրութիւնք» բաժնում, թե՛ «Այստեղ պակասում են մի քանի բացատրութիւնք. գուցե... կարողացած չէր աւարտել կամ պարզաբանել, իսկ սեւ օրինակների մէջ շարունակութիւնը եւ վերջը մենք չգտանք» (Նալբանդյան, Թուղթ, էջ 71), տեղին է: Ասել է, թե Նալբանդյանը Թղթի ոչ բոլոր սուրբգրային վկայություններն է վերլուծել, չնայած որ բնագրում դրանք չակերտյալ են:

⁸ Ղազար Փարպեցու գրած թուղթը. Մեղադրություն ստալիսու աբեղաներին, Թարգմանութիւն եւ բացատրութիւնք **Մ. Նալբանդեանց**, Ս. Պետերբուրգ, 1868, Համառօտ կենսագրութիւնը. էջ I-XXIII, Թուղթը. էջ 1-74 (այսուհետև՝ «Նալբանդյան, Թուղթ», էջահամարները շարադրանքի մէջ՝ փակագծերում):

հայտում է հեղինակի անաչառ և բարեխիղճ վերաբերմունքը խնդրո առարկա բնագրի նկատմամբ: Մ. Նալբանդյանն անում է տարատեսակ սրբագրումներ և ուղղումներ, որոնցից, ցավոք, Ղազար Փարպեցու երկերի քննական բնագիրը կազմողները, չեն օգտվել, չնայած «Մատենագրություն» բաժնում հիշատակում են Մ. Նալբանդյանի թարգմանությունը⁹:

Սուրբգրային քաղումները Թղթի՝ Մ. Նալբանդյանի թարգմանության ծանոթագրություններում (և թերի թողնված հատվածում) ներկայացնում են հետևյալ պատկերը¹⁰.

ա. *Սուրբգրային ուղիղ քաղումներ* – Թղթի բնագրում սուրբգրային ուղիղ մեջբերումները հիշատակված են երկու ձևով՝ հանվան և առանց անվականական հիշատակության: Հանվան հիշատակությունների միջոցով հնարավոր է պատկերացում կազմել սուրբգրային կանոնի, հեղինակություն վայելող գրքերի, դրանց խորագրերի մասին: Թղթում հանդիպում են հետևյալ անվանական վկայությունները. «Մովսիսագիր պատմութիւն եւ այլ մարգարեք» (ՄՀ, էջ 2382), [Սուրբ] Գիրք (էջ 2384), Առաքելական Թղթերից՝ Առ Կորնթացիս Ա. թուղթ (էջ 2382), Առ Եփեսացիս երկիցս (էջ 2391), Առ Գաղատացիս (էջ 2390), «Սաղմոսերգն» (էջ 2389, 2392՝ «Դաւթի սաղմոս» ձևով), «Օրհնութիւն օրհնութեանց» («Երգ երգոց») (էջ 2391): Մ. Նալբանդյանն այդ հատվածներն առել է չակերտների մեջ, ծանոթագրություններում նշել համապատասխան գլխահամարը¹¹ և գրաբարյան բնագիրն ամբողջությամբ, եթե կան շեղումներ Աստվածաշնչի կանոնական տեքստից:

Թղթում կան սուրբգրային հավանաբար *գրչական սխալի* հետևանք վկայություններ, որոնք նույնությամբ թողնվել են քննական բնագրում. որոշները նկատել է Նալբանդյանը և սրբագրել. «Եւ վկայե

⁹ Թուղթ (1904), Մատենագրութիւն, Ա. Թարգմանութիւններ, կետ 4, էջ ԺԲ.:

¹⁰ Մ. Նալբանդյանի աշխատանքն ընդգծում-կարևորում ենք, քանի որ ներկայացնում է սուրբգրային հղումների ուսումնասիրության համապարփակ ծրագիր և կարող է ուղենշային լինել նաև այլ աղբյուրների ուսումնասիրության համար:

¹¹ Նալբանդյան, Թուղթ, էջ 323:

Գիր *ի Կաթողիկէսն*, եթէ. Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշ-
խարհ (Իմաստ. Բ. 24¹²): Սա (Իմա՛ Պողոս) «Սակաւ բանիւք գոր
յերկրորդումն Թղթին գրէ ի Կորնթացւոցն. . . Ընդէ՞ր իսկ բնաւ եւ
անուանի ի միջի ձերում պոռնկութիւն (Ա. Կոր. Ե 1¹³): Որպէսի
կասկածներ չլինեն, թէ ինչու ինքը միջամտել է բնագրին և ուղղում
արել. Մ. Նալբանդյանը հղում է Ագաթանգեղոսին. «Մենք ի Կաթողի-
կէսն խոսքը Իմաստութիւն (Սողոմոնի) կարդալով թարգմանեցինք,
որովհետև այն Փարպեցու խոսքը չէր... Եվ որպէսզի չկարծեն ոմանք,
թէ հին ժամանակներում Սողոմոնի Իմաստությունը Կաթողիկէայք
էր անվանվում (*ըստ որում անհիմն կարծիքներ առատ են մեր ժամա-
նակներում*), ուստի վկա ենք կանչում **Ագաթանգեղոսը**, ուր ս. Լուսա-
վորիչը ասում է. «Քանզի ասէր իսկ Իմաստունն, թէ **նախանձու բան-
սարկուին եմուտ մահ յաշխարհ**»¹⁴ (Իմաստ. Բ, 24):

Թղթում ուղիղ վկայություններ հաճախ բերվում են առանց
գրքի անունը հիշատակելու, փոխարենը, ինչպես տարածված է միջ-
նադարյան մատենագրության մեջ, նշվում է հեղինակի խոսքը «Պա-
ղոսն ասէ», «Մարգարէն ասէ», ապա դրվում է ուղիղ քաղումը. «Եւ
արդ՝ իցէ՞ որ ի ժամանակս նմանող մարգարէին Երեմիայի, որ ասէր
ողբալով, թէ՝ «Ո՞ տայր զգլուխս իմ ի ջուր, եւ զաչս յաղբերս արտա-
սուաց, եւ թող նստեալ լայի *զթշուառութիւն աշխարհիս*»¹⁵ (Հմմտ.
Երեմ. Թ. 1):

Թղթի առաջաբանում կա Պողոս առաքյալի մի վկայություն,
որի մասին հիշատակություն չենք գտել. «Եւ յիշելով զբանն Պաւղոսի,
զի «**Յամենայն ժամ աստուածասէրքն առանց խղճի մտաց կեցցեն**» (ՄՀ,
էջ 2378¹⁶):

¹² Նույն տեղում, Նալբանդյանը սրբագրում է բնագիրը, ծնթ. 27, էջ 306, 352:
ՄՀ, Թուղթ. վրիպակն ուղղված չէ, էջ 2380:

¹³ Նալբանդյան, Թուղթ. սրբագրում է՝ Կոր. Առաջին, Թուղթ, ծնթ. 52, էջ 356-
357: ՄՀ, Թուղթ, վրիպակն ուղղված չէ:

¹⁴ Նալբանդյան, Թուղթ, էջ 352:

¹⁵ Նալբանդյանն այս հատվածը չի ծանոթագրել:

¹⁶ Հմմտ. Նույն տեղում, ծնթ. 7, էջ 334:

Այսպիսով՝ Ղազար Փարպեցու Թղթի ուղիղ քաղումները ցույց են տալիս, որ հեղինակը նախապատվություն տվել է առավելապես Առաքելական թղթերին՝ դրանք անվանապես հիշատակելով: Սա պետք է բացատրել նախ թղթի ժանրային առանձնահատկություններով. չէ՞ որ Փարպեցին հյուսում էր Թուղթ, և չկար ավելի հուսալի աղբյուր, քան Սուրբ Գիրքը: Հին Կտակարանի ուսուցողական գրքերը նույնպես հաճախ են հիշատակվում: Սա բացատրվում նրանով, որ այս գրքերն անգիր են իմացվել: Փարպեցուն մեղադրողներն ասում են՝ «...Գիր ոչ կարդայ, եւ զընթերցուածն այնպէս ասէ անսայթաք՝ որպէս թէ գրոցն» (էջ 2392), պատասխանում է. «Իսկ մեր երանելի վարդապետքն զամենայն զկտակարանս եկեղեցոյ երիցս եւ չորիցս ուսեալ մեզ ի սկզբանէ մինչեւ ի կատարած գրոցն՝ համարս պահանջէին ի մէնջ զնոյնս, եւ իբրեւ գԴաւթի Սաղմոսն պաշտել մեզ հարկաւորէին» (էջ 2392): Այսինքն՝ անգիր անում էին ողջ Աստվածաշունչը, այլ ոչ միայն Դավթի Սաղմոսները:

բ. *Սուրբգրային անուղղակի քաղումներ* - Թղթում անուղղակի վկայակոչումներ Ղազար Փարպեցին անում է խոսքի համոզականությունն ուժեղացնելու նպատակով, շարադրանքն ավելի ազդեցիկ է դարձնում՝ սուրբգրային դեպքեր, դեմքեր հիշատակելով¹⁷: Դրանք Թղթի՝ հոգեբանական լարում պահանջող հատվածներն են: Եվ այստեղ Ղազարը հաճախ է հիշատակում, թե իր նկատմամբ դրսևորած չարության հիմնական պատճառը նախանձն է¹⁸: Թղթի այս հատվածներում սուրբգրային անուղղակի վկայակոչումները թվարկումով հաջորդում են իրար՝ սաստկացնելով հուզականությունը և ընդգծելով

¹⁷ Մի քանի օրինակ տես **Ա. Դուլխանյան**, Միքայել Նալբանդյանը և Ղազար Փարպեցու Թուղթը, Հ⁴ 3, 1980, էջ 142-145: **Ա. Ալեքսանյան**, Ղազար Փարպեցու «Թուղթ» առ Վահան Մամիկոնեան» երկը միջնադարյան նամակի տեսության լույսի ներքո, Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, թ. 9, էջ 62-63:

¹⁸ Այս թեմայի մասին տես՝ **Ա. Դուլխանյան**, Աստվածաշնչի մի մատգամի դրսևորումը Գրիգոր Տաթևացու և Մկրտիչ Նաղաշի մոտ, Բանբեր Մատենադարանի, Երևան, 2008, էջ 109-115:

թղթի հեղինակի արդար ըմբոստությունը: Նախանձի դեր գայթակղել է շատերին՝ Կայենին, Եսավին, Հովսեփի եբայրներին, Մավուդին և վերջապես՝ հրեաներին, որոնք նախանձից դրդված՝ անարգեցին և խաչեցին Հիսուսին: Այս հատվածներն աստվածաշնչյան քաղումների առումով ամենաձավալուններն են¹⁹:

Հաճախ Ղազար Փարպեցին, վստահ, որ ընթերցողը գիտի՝ խոսքն ինչի մասին է, Քրիստոսի օրինակով խոսքը դիպուկ է դարձնում ավետարանական առակներով՝ առանց դրանց բովանդակությանն անդրադառնալու: Հիշատակված են Սամարացու, Տասը կույսերի (Փարպեցու մոտ՝ Հիմար կույսեր) առակները²⁰:

«Առեալ լիաբուռն գղահեկանս ի *Շամարտացի*²¹ գթածէն, զգինս դարմանոց հիւանդաց՝ ի սապատս համբարէ, եւ զհիւանդս հանեալ ի պանդոկոյն՝ ընկենու արտաքս բազում անփութութեամբ» (Հմմտ. Ղուկ. Ժ. 29-37. ՄՀ, էջ 2390):

«Իսկ որ կամիցի ապաքինել ըստ ձեռոյ *անմիտ կուսանացն*՝ չդիպի ողորմութեան (Հմմտ. Մատթ. ԻԵ. 1-13):

գ. *Ոճավորում* – Սուրբգրային հղումների մեծագույն մասը Ղազար Փարպեցու Թղթում կիրառված է *ոճավորման* նպատակով: Ինչպես վերը նշվեց, Ղազարը Սուրբ Գրքի բնագիրն անգիր է իմացել. դա թույլ է տվել ազատորեն օգտվել սուրբգրային բնագրի հնարավորություններից՝ խոսքը պատկերավոր և համոզիչ: Սրանք առաջին հայացքից անորսալի տեղիներ են. այնքան ձուլված են Ղազարի խոսքին, որ երբեմն Ս. Գրքի և հեղինակային շարադրանքի սահմանները տարբերակել դժվար է: *Սա է Ղազար Փարպեցու Թղթի տպագիրների*

¹⁹ Մեկ այլ ծավալուն անդրադարձ արել է պոռնկությունը մեղք համարելու հետ կապված: Հիշատակված են հինկտակարանյան դեմքեր՝ Փենեհես, Ամոն, Մոզես, Ենովք, Նոյ, Հեսու:

²⁰ Առակների բնագրերը տե՛ս Ավետարանական առակների մեկնություններ, կազմ.՝ **Լ. Հովսեփյան**, խմբ.՝ **Գ. Տեր-Վարդանյան**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013, էջ 229-250, 268-284:

²¹ Պետք է լինի Սամարացի. այս վրիպակը նկատել է Մ. Նալբանդյանը (Թուղթ, էջ 316), սակայն ՄՀ քննական բնագրում վրիպակն ուղղված չէ:

հիմնական բացը: Մ.Նալբանդյանի թարգմանությունն այդ բացը լրացնում է մասամբ և պետք է անպայման կարևորվի Թղթի հետագա ուսումնասիրությունների ժամանակ:

Վահանին իր խնդրը հասցնելու, լսելի դարձնելու, բարեկամաբար մոտեցնելու նպատակով Ղազար Փարպեցին Պողոս առաքյալի խոսքերով է դիմում մարգպանին՝ որպես իրենը.

ՄՀ, Թուղթ	Նալբանդյան, Թուղթ	Աստուածաշունչ
Զկեալ զիմ <i>ի տղայութեանն՝ զայն տէրդ իսկ ինքնին բաջ գիտե</i> ²² : Տարեալ զիս ըստ վարդապետաց իմոց հրամանի ի Հոռոմս... (Էջ 2379):	<i>Տղայությանս ժամանակ</i> իմ վարած կյանքի որպիսությունը, <i>դու, Տեր, ինքդ լավ գիտես:</i> Իմ ուսուցիչների հրամանով գնացի Հունաստան (Էջ 305, ծնթ. 17)...	«Քանզի կենաց իմոց որ <i>ի մանկութենէ, ի սկզբանէ լեալ յազգի անդ իմում</i> յԵրուսաղէմ, <i>տեղեակ են ամենայն հրեայքն</i> » (Գործք, ԻԶ. 4)*: *Այսպես է սկսում իր խոսքը Պողոս առաքյալը դատավարության ժամանակ:

Ղազարը, զինված հունական առաջադեմ սուրբ հայրերի գրվածքների գիտելիքներով, իրեն «աղանդավոր» համարող տգետների հակասում է.

ՄՀ, Թուղթ	Աստուածաշունչ
...Եւ ըստ զարեւոյ տկարամտութեանս իմոյ կարդացեալ զգիրս արանց սրբոց, որք վառեալք սուրբ Հոգւոյն զինու՝ զսուրս հոգեփողոսոս աղանդաւոր ուսմանցն դարձուցանէին անորէն ի սիրտս նոցունց, եւ զաղեղունս նոցա փշրեցին , եւ զփրկագործ վարդապետութիւնն՝ իւրեանց գրով մեզ	<i>Սուրբ նոցա մտցեն ի սիրտս նոցա, եւ աղեղունք նոցա փշրեցին (Սաղմ. Լ,Զ. 15):</i>

²² ՄՀ, սուրբգրային հղում չունի: Այնինչ Մ. Նալբանդյանը ճշգրտում է:

աւանդեցին (էջ 2383):	
«Եւ ահա լինէի պրծեալ ի չարաթոյն ժանեաց զազանացն, որք յայնմ հետէ դարանամտեալք ի ծածուկ, եւ ըստ անհամար մեծութեան իւրեանց սաստիկ կարասաւ գնեալ բազում յեսան՝ «սրեցին որպէս սուսեր զլեզուս իւրեանց, եւ թոյնք իծից էին ի ներքոյ շրթանց» : Եւ իմ ոչ մարթացեալ աղաթել իբրեւ զսաղմոսերգն, թէ. «Պահեա՛, Տէր, ի ձեռաց մեղաւորի, եւ ի մարդոյ չարէ փրկեա՛ զիս» . որոց հետամտեալ այնուհետեւ խափանեցին զգնացս իմ, եւ հասեալ յոցոտեցին զիս ի մահ:	<i>Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի եւ թոյնք իծից ի ներքոյ շրթանց նոցայ (Մաղմ. ՃԼԹ. 4):</i> <i>Աստուած իմ փրկեա զիս ի ձեռաց մեղաւորի, ի ձեռաց անաւրիւնի եւ անիրաւի (Մաղմ. ՃԼԹ. 3):</i>

Մովսէս փիլիսոփայի մասին՝

ՄՀ, Թուոթ	Աստուածաշունչ
«Երանելի փիլիսոփոսն Մովսէս, որ արդարեւ մինչդեռ էր ի մարմնի՝ ցանկ երկնային զարացն էր քաղաքակից» ²³ (էջ 2393):	<i>Ապա այսուհետեւ ոչ էք աւտարք եւ պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց, եւ ընտանիք Աստուծոյ (Հմմտ. Առ Եփես. Բ. 19):</i>

Տգեւտ արեղաները բամբաստում են Ղազար Փարպեցուն.

ՄՀ, Թուոթ	Աստուածաշունչ
«Իսկ ոմանց ի տանդ տեառն (իմա՝ քո՝ տիրոջդ տանը) ես իբրեւ զանաւթ յաւելորդ» ²⁴ (էջ 2387):	<i>Այլ ի տան մեծի ոչ միայն են անաւթք ոսկեղէնք եւ արծաթեղէնք, այլ եւ փայտեղէնք եւ խեցեղէնք. եւ որ ի պատուի են, եւ են որ յանարգութեան (Հմմտ. Բ. Տիմ., Բ. 20)</i>

դ. Կա՞ն արդո՞ք տարբերություններ Աստվածաշնչի ընկալյալ՝
Հ. Զոհրապյանի (1805 թ.) բնագրից – Այո, կան: Որոշ տարբերություններ նկատել է Մ. Նալբանդյանը, սակայն հարցը թողել է անպատասխան: Մենք Զոհրապյանի տպագիր Աստվածաշնչից տարբերվող մի

²³ Այս գուգահեռը ներկայացվում է առաջին անգամ:

²⁴ Զուգահեռը ներկայացվում է առաջին անգամ:

քանի վկայություններ համեմատել ենք հնության կնիք ունեցող Երուսաղեմի Հ^մ 1925 Երզնկայի Աստվածաշնչի հետ և նկատել, որ Ղազար Փարպեցու վկայությունները մոտ կամ նույնական են Երզնկայի Աստվածաշնչի համապատասխան ընթերցումներին²⁵.

ՄՀ, Թուղթ	Երզնկայի Աստվածաշունչ, Երուսաղեմ Ս. Յակոբեանց մատենադարան, Հ ^մ 1925	Զոհրապեան Աստուածաշունչ
Յորժամ զամենայն արդարութիւնս կատարիցէք՝ ասասջի՝ ք, եթէ ծառայք անպիտանք եմք	Յորժամ կատարիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք եթէ ծառայք անպիտանք եմք (Էջ 998):	Յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք՝ թէ ծառայք անպիտանք եմք (Հմմտ. Ղուկ. ԺԷ. 10):

Տեղ-տեղ Ղազար Փարպեցին սուրբգրային վկայությունները հարմարեցնում է բնագրին. այս օրինակները պետք է դիտարկվեն միայն Թղթի բնագրի սահմաններում, ուստի Աստվածաշնչյան ընթերցումներ համեմատության հիմք լինել չեն կարող.

ՄՀ, Թուղթ	Աստուածաշունչ
Վասն զի յարե, յորմէ հետէ դու, տէր, ըստ քո անարգամեծար խնամոցդ յանձնեցեր զիս քո ընտանեաց... եւ պատուէին որպէս եւ զհայր. եւ մանաւանդ առաւել տէր Համազասպ, որում տացէ Տէր ողորմութիւն, որպէս եւ տանն Ոնեսիփորայ, բարեխաւսութեամբ աստղի զբանդ. զի բազում անգամ հանգոյց զիս	<i>Տացէ Աստուած ողորմութիւն տանն Ոնեսիփորայ (Հմմտ. Բ. Տիմ., Ա. 16):</i>
Որ հանէ զպատուականն յանարգէ, բերան իմ եղիցի	<i>Եթէ հանցես զպատուականն յանարգէ, իբրեւ զբերան իմ եղիցես (Երեմ. ԺԵ. 19):</i>

²⁵ Երուսաղեմի Ս. Հայրեայնց վանքի մատենադարանի ձեռ. Հ^մ 1925. Մաշտոց-յան Մատենադարանի դրսի ժապավեն Հ^մ 8:

Այս օրինակները ցույց են տալիս, որ Թղթում հիշատակված սուրբգրային վկայությունները լրացուցիչ մեկնաբանությունների և շտկումների կարիք ունեն:

ե. Կարելի՞ է արդյոք կապ տեսնել Ղազարի անձնական ողբերգության և Թղթում հղված սուրբգրային հղումների միջև: Կապն ակնհայտ է: Այս հարցի մասին Ա. Ալեքսանյանն անում է մի քանի կարևոր դիտարկումներ. «Թղթի գրեթե յուրաքանչյուր պարբերությունը, անգամ արտահայտությունն ու բառը պատահականորեն չեն ասված»: Թղթի նախաշավիղ-առաջաբանում ընդգծվում է Պողոս առաքյալի հանդուգն քայլը, որը մարդկանց մեղադրանքները տանել չկարողանալով, ստիպված է լինում իր պարծանքները թվարկել և ներման է արժանանում Քրիստոսի կողմից²⁶: Արդ, Ղազարի սպասելիքն է, որ Վահանը «քրիստոսանմանութեամբ» վարվի՝ ներելով իր «անզգամութիւնը»²⁷, ինչպես Քրիստոս ներեց «մեծ առաքեալ Պաւղոսին»: Պողոս-Քրիստոս կապը Ղազար Փարպեցին հյուսում է Ղազար-Վահան զուգահեռում ճարտասանական հնարանքների փայլուն կիրառությամբ ապացուցում է իր անմեղությունը:

«Թղթի առաջաբանի անանուն հեղինակը հիացած է նամակագիր Ղազարի էությամբ. նա անվախ է. «Իբրեւ զքաջ պատերազմող զինեալ զինքն, զի բանիւ զաւրութեան զիւր ոգւոյն եւ զքաջալերութեան եւ զպատկեր կերպարանաց ի ձեռն գրոյ Թղթոյս այսորիկ ծանուցէ նոցա..., զի կարճեսցին բերանք չարախաւսացն զնմանէ» (էջ 2378): Ղազարը վստահում է Վահան Մամիկոնյանին և գիտի, որ արդարությունը գնահատող մարդ է. «Եւ մանաւանդ զի վստահ եղեալ յամենիմաստ մարգպանն, եթէ գիտէ ճարտարութեան բանի լինել չլսող եւ գիտել զիրաւունս, զի անմեղադրելի զինքն արասցէ ի ձեռն գրոյս» (էջ 2378):

²⁶ Ա. Ալեքսանյան, Նշվ. աշխ., էջ 62-63:

²⁷ «Լաւ էր եթէ ներէիք փոքր մի եւ իմում անզգամութեանս. այլ եւ անսացեք իսկ» (Հմմտ. Բ. Կորնթ. ԺԱ. 1, 16):

Եվ վերջապես Ղազար Փարպեցին ունի իր արդար իրավունքների համար պայքարելու ինքնավստահությունը: Դա տգետ ամբոխից վարկաբեկված անհատի արդար զայրության է, որ հրաշալի կրթություն ստացած Ղազար Փարպեցու Թղթում դրսևորվում է սրամիտ և ճարտար հյուսվածքով, հատկանիշներ, որոնցով Թուրթն ընդմիշտ կլինի հայ մատենագրության զարդը:

Այսպիսով՝ Ղազար Փարպեցու Թղթի սուրբգրային վկայությունների ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալին՝

1. Ղազար Փարպեցու Թղթի տպագիրներում սուրբգրային վկայություններն արտացոլված են թերի:

2. Թղթում Աստվածաշնչի գրքերի խորագրերի անվանական հիշատակումները կարևոր վկայություններ են Սուրբ Գիրքը Ե. դարի կտրվածքով ուսումնասիրելու համար:

3. Թղթի՝ Մ. Նալբանդյանի քննական թարգմանության ծանոթագրությունները գիտական արժեք ունեն և համապատասխան լրացումներից հետո անպայմանորեն պետք է ընդգրկվեն Ղազար Փարպեցու երկերի ապագա հրատարակությունների մեջ:

4. 2003 թ. «Մատենագիրք Հայոցում» հրատարակված Թղթի քննական բնագիրը նույնպես ունի սուրբգրային վկայությունների բացթողումներ և սխալներ, որոնք պետք է շտկվեն:

5. Ղազար Փարպեցին Աստվածաշնչի գրքերից նախապատվություն տվել է Առաքելական թղթերին և Սաղմոսներին: Առաքելական թղթերի ընտրության հարցում էական դեր է կատարել հեղինակի ընտրած ժանրը: Իսկ Սաղմոսների դեպքում՝ հյուսվածքի զգացմունքային-պատկերավոր բնույթը:

6. Նախանձի և տգիտության դեմ անգիշում պայքարում Ղազար Փարպեցու խոսափողը Պողոսն է՝ հակասական և խիզախումներով կյանք ապրած, սակայն Քրիստոսին նվիրված առաքյալը: Սուրբգրային ուղիղ և անուղղակի մեջբերումներով արտահայտված նրա խոսքն ու գործը Ղազար Փարպեցու Թղթի հյուսվածքի հիմքն են:



ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Մանկավարժական գիտությունների
թեկնածու*

ԵՂԻՇԵՒ ԵՎ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Ներածություն

Ավարայրի ճակատամարտը հայ ժողովրդի պատմության մեջ դարձել է ուղեցույց: Հետագա ազգային-ազատագրական պայքարի դրվագներում այն ունեցել է կողմնորոշիչ դեր: Այդ ճակատամարտի մարմնացումը, հերոսականության բարձրակետը Վարդան Մամիկոնյանն է, որն իր անձնվեր նահատակությամբ հավերժորեն ապրում է հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ և բոլոր հայ հայրենասերների սրտերում: Վարդանանց պատերազմի և Ավարայրի դեպքերի մասին ստեղծվել է հսկայածավալ գեղարվեստական, պատմագիտական, գրականագիտական գրականություն: Այդ բոլոր ստեղծագործությունների հիմքում ընկած են հինգերորդ դարի երկու պատմիչների երկերը՝ Եղիշեի ու Ղազար Փարպեցու: Եղիշեն Ավարայրի դեպքերի ականատեսն ու մասնակիցն է, Ղազար Փարպեցին մի փոքր ավելի ուշ գրական կյանք մտած, Մամիկոնյան տան մտերիմն ու պատմիչը, որը դեպքերը նկարագրում է առավել անկիրք ու հանդարտ, հաղորդում փաստեր, որոնք Եղիշեն միտումնավոր անտեսել էր: Եղիշեի

գիրքը, պատմական մեծարժեք գործ լինելով հանդերձ, դուրսագնեղ-գական շունչ ունի իր մեջ:

Բոլոր դեպքերում ոչ մի հակասություն չկա երկու պատմիչների հաղորդած փաստերի մեջ. երբեմն դրանք խիստ նույնական են, իսկ երբեմն լրացնում են մեկը մյուսին:

Եղիշեն Ավարայրի դեպքերի մասին

Եղիշեն նշանավոր փիլիսոփա-աստվածաբան էր, և նրա փիլիսոփայական աշխատությունները հիացմունք են պատճառում: Եղիշեի աստվածաբանական երկերը 2007 թ. հրատարակել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը: Այն գրաբարից ժամանակակից արևելահայերեն է թարգմանել Մարթա Արաբյանը, իսկ գրքի առաջաբանը գրել է Ասողիկ եպս. Արիստակեսյանը: Նա նշում է, որ Եղիշե վարդապետը (415-475 թթ.) Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի կրտսերագույն աշակերտներից է:

Մովսես Խորենացու և այլ աշակերտների հետ մեկնել է Ալեքսանդրիա՝ ուսանելու: Վերադարձել է հայրենիք և դարձել Վարդան Մամիկոնյանի դպրապետը, մասնակցել է Ավարայրի ճակատամարտին: Հերոսամարտից հետո անցել է ճգնակեցությանը¹:

Եղիշեն հայ մատենագրության պատմության մեջ մնացել է առաջին հերթին «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» գրքով: Մատյանի պատվիրատուն Մամիկոնյան նախարարական տան երեց Դավիթն է²:

Իր մատյանի նախաբանում Եղիշեն ներկայացնում է, թե ինչ բովանդակություն է ունենալու գիրքը. անդրադառնալու է Ավարայրի ապստամբությանը նախորդող դեպքերին, բուն ճակատամարտին և դրան հաջորդող իրադարձություններին:

Իր պատմության մեջ նկարագրվող դեպքերին ու դեմքերին ներկայացնում է որպես ականատես. «Արդ որովհետև քո աննախանձ

¹ Սուրբ Եղիշե վարդապետ, Աստվածաբանական երկեր, Ս. Էջմիածին, 2007, էջ 5:

² Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1989, էջ 7:

բարք ու բնությունից պատվեր ու հրաման ստացանք, սկսենք, որտեղից արժան է սկսել, թեպետև չէինք հոժարի մեր ազգի թշվառությունը ողբալ: Ահա մեր կամքի հակառակ արտասովալից ողբերով շարադրում ենք այն բազմաթիվ հարվածները, որոնց մեջ հենց մենք էլ ընկանք՝ ականատես լինելով»³:

Պատմաբաններն ու բանասերները վաղուց արձանագրել են, որ Եղիշեն քաղաքագետի հմտությամբ բացատրում է, թե ինչու հայերը պետք է ապստամբեին: Արշակունյաց թագավորության վերացումից հետո Սասանյան Պարսկաստանը Հայաստանը դարձնում է Պարսկաստանի մարզերից մեկը: Քաղաքական և տնտեսական վիճակը Հայաստանում դառնում է անտանելի: Ամեն երկու տարին մեկ Հայաստանից դուրս էր բերվում հայոց այրուծին՝ հիմնական ռազմական ուժը. հայոց գործը ուղարկվում է քուշանների դեմ պատերազմելու:

Հինգերորդ դարում և, ընդհանրապես հնագույն ժամանակներում, ամեն բանակի համար կարևոր էր այրուծին: Հիշենք, թե ինչ էր գրում Մովսես Խորենացին Տիգրան Երվանդյանի բանակի մասին. «Հետևակ կռվողները ձիավոր դարձան...»⁴:

Պարսիկները ծանրացրել էին երկրի հարկերը, հարկատու էր դարձել եկեղեցին, անգամ մենակյաց ճգնավորները: Սա դժգոհություն առաջացրեց հասարակական բոլոր խավերի մեջ: Պաշտոնից ազատվեց հազարապետ Վահան Ամատունին և նրա փոխարեն նշանակվեց ոմն պարսիկ⁵: Բացի դրանից, նախարարական տների մեջ խռովություն գցեցին: Պարսիկները զարմանում էին, թե մի երկրից այդքան զանձ դուրս գալուց հետո երկիրն ինչպես է մնում կանգուն: Ահա այս ճնշումներին ավելանում է վերջին ու ամենամեծ հարվածը՝ դավանափոխության պահանջը:

Արտաշատում հայ նախարարները հավաքվում են և որոշում գրել Հազկերտ Երկրորդի դավանափոխության պահանջին մերժողա-

³ Եղիշեն, Նշվ. աշխ., էջ 11:

⁴ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 85:

⁵ Եղիշեն, Նշվ. աշխ., էջ 47:

կան պատասխան: Հայ նախարարներն անհնազանդության համար կանչվում են Տիգրան, ուր նրանք ստիպված ձևացնում են կեղծ ուրացություն ու վերադառնում են Հայաստան: Անգղ գյուղաքաղաքում հասարակ ժողովուրդը ըմբոստանում է նախարարների հետ Հայաստան եկած մոգերի դեմ: Ըստ Եղիշեի՝ այս պահից իրարից հեռանում են մարգպան Վասակ Սյունեցին ու երկրի սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Եղիշեն լռում է Տիգրանում տեղի ունեցած մի շարք իրադարձությունների մասին:

Պատմական դեպքերի այս ժամանակահատվածի նկարագիրը բոլորովին այլ է Ղազար Փարպեցու մոտ:

Ըստ Փարպեցու՝ հայ-պարսկական հարաբերությունների բարդացմանը նպաստում է Հայաստանի մարգպան Վասակ Սյունեցու փեսան՝ Վարազվադանը. «Այս չարամիտ Վարազվադանը, իմանալով Վասակի անսանձ թշնամանքի մասին և չկարողանալով հանդուրժել աներոջ սաստիկ բռնությունը... փախավ պարսից երկիրը և ընկավ Արյաց հազարապետ Միհրներսեհի մոտ»⁶: Փարպեցին Վարազվադանին համարում է դիվախոգի, մահաթույն ու չարագրգիռ:

Թե՛ Ղազար Փարպեցու և թե՛ Եղիշեի պատմություններում հայ-պարսկական քաղաքական և տնտեսական հարաբերությունների կարգավորողը Պարսկաստանի հազարապետ Միհրներսեհն էր, որն այդ ժամանակ ծեր էր:

Որոշվում է Հայաստան, Վրաստան ու Ադվանք ուղարկել դավանափոխության պահանջով հրովարտակ, որի պատասխանը մերժումն է լինում, անգամ մարգպանի կողմից: Ահա Արտաշատի ժողովին մասնակցած հայ նախարարների անունները՝ *Սյունյաց տեր Վասակը, Արծրունյաց տեր Ներշապուհը, Վրիվ մաղխազը*⁷, *Մամիկոնեից տեր և՛ հայոց սպարապետ Վարդանը, Վահևունյաց տեր Գյուտը,*

⁶ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982, էջ 87:

⁷ Մաղխազ - ասորական բառ - իշխան: Մեծ Հայքի միասնական թագավորության ժամանակներում այդպես էր կոչվում Արշակունի գահակալների թիկնապահ հրամանատարը: Տե՛ս Ղազար Փարպեցի, Նշվ. աշխ., էջ 496:

Մոկաց տեր Արտակը, Անձևացյաց տեր Շմավոնը, Ապահունյաց տեր Մանեճը, Վանանդի տեր Առավանը, Արշարունյաց տեր Արշավիրը, Ամատունյաց տեր Վահանը, Գնունյաց տեր Ատոմը, Պալունյաց տեր Վարազշապուհը, Աշոցքի տեր Հրահատը, Դիմաքսենից տեր Հմայակը, Աբեղենից տեր Գազրիկը, Առավեղենից տեր Փափազը, Ջյունական Վրենը⁸:

Ըստ Եղիշեի՝ Հազկերտ Երկրորդի մոտ կանչվել են հետևյալ հայ նախարարները, որոնց անուն-անուն ինքը ճանաչում էր՝ Սյունյաց տոհմից Վասակ անունով, Արծրունյաց տոհմից Ներշապուհ անունով, Ռշտունյաց տոհմից Արտակ անունով, Խորխոռունյաց տոհմից Գաղեշո անունով, Մամիկոնյան տոհմից՝ Վարդան անունով, Մոկաց տոհմից Արտակ անունով, Ապահունյաց տոհմից Մանեճ անունով, Ամատունյաց տոհմից Վահան անունով, Վահկունյաց տոհմից Գյուտ անունով, Անձևացյաց տոհմից Շմավոն անունով⁹:

Տիգրան գնացած հայ նախարարների ցուցակը, ինչը որ հաղորդում է Եղիշեն, նույնն է նաև Փարպեցու մոտ, միայն նա ավելացնում է հետևյալ. «Իսկ Վրաց աշխարհից Աշուշա բղեշխը և աշխարհի այլ տանուտերներ»¹⁰:

Փարպեցին բավականին մանրամասն պատմում է, թե ինչ է տեղի ունեցել Տիգրանում: Հայ նախարարներին Հազկերտը սպառնում է մահապատժով, եթե նրանք դավանափոխ չլինեն: Երկար մտատանջություններից հետո հայ նախարարները, Աշուշա բղեշխը, Աղվանքից եկածները որոշում են կեղծ ձևով ուրանալ, հետո գնալ ու մտածել հետագա անելիքների մասին:

Փարպեցին հաղորդում է մի փաստ, որն իսպառ բացակայում է Եղիշեի մոտ. «Սակայն Պարսից Հազկերտ արքան Վրաց Աշուշա բղեշխին, Սյունյաց իշխան Վասակի երկու զավակներին՝ Բաբիկին ու Ատրներսեհին, չարձակեց Հայոց մյուս նախարարների հետ. առաջի-

⁸ Նույն տեղում, էջ 101-1033:

⁹ Եղիշե, Նշվ. աշխ., էջ 85-87:

¹⁰ Ղազար Փարպեցի, Նշվ. աշխ., էջ 109:

կա գործերի անորոշությունը նկատի ունենալով՝ նա կասկածով զգուշանում էր»¹¹:

Հայ նախարարները կեղծ ուրացությունից ընկնում են խոր մտատանջության մեջ. հատկապես նրանք չգիտեին՝ արդյոք Վարդան Մամիկոնյանը՝ Սահակ Պարթևի թոռը, կարող է գնալ այդ ազգադավ քայլին: Նախարարները խնդրում են Արտակ Մոկաց իշխանին, որին սպարապետը շատ համակրում էր, խոսել Վարդան Մամիկոնյանի հետ: Վարդանը, ելնելով բոլոր նախարարների շահերից, ակամա միանում է նրանց, սակայն ներքին տագնապները հայրենիքում նրան հանգեցնում են ուրիշ քայլի: Նա իր ողջ ընտանիքով մեկնում է Հայաստանի բյուզանդական մասը: Բագրևանդ գավառի Արամանա գյուղում ցանկանում է հանգստանալ, ապա նորից շարունակել ճանապարհը¹²:

Տեղի է ունենում անսպասելին. «Հայոց մեծ սպարապետ ու Մամիկոնեից տեր Վարդանի և իր եղբայրների՝ պալատով, ազգուտակով հանդերձ՝ Հայոց աշխարհից գնալու այս խորհուրդը հանկարծ հայտնեցին Սյունյաց իշխան Վասակին, որն այդ ժամանակ մարգպանն էր Հայոց»¹³:

Վասակն իր մոտ է կանչում Հայոց ամենայն տանուտերներին ու սեպուհներին, խորհրդակցում նրանց հետ և նամակ է գրում, ստիպում նամակ գրեն բոլորը, դրանք հաստատում իր մատանիով, դնելով նաև Ավետարանը¹⁴, ուղարկում է Վարդանին: Վարդանն իր ընտանիքով վերադառնում է: Վարդանը, Վահան Ամատունին սկսում են խորհել ապստամբության մասին:

Ընդհանուր տեսակետ սրբազան ուխտի մասին և այլ ընդհանրություններ

Թե՛ Եղիշեն և թե՛ Ղազար Փարպեցին խոսում են ապստամբության հաջողության երաշխիք սրբազան ուխտի մասին, որի առաջ

¹¹ Նույն տեղում, էջ 129:

¹² Նույն տեղում, էջ 133:

¹³ Ղազար Փարպեցի, Նշվ. աշխ., էջ 135:

¹⁴ Նույն տեղում, էջ 137:

հավասար պարտավորություններ ունեին թե՛ նախարարները, թե՛ հոգևորականները, թե՛ շինականները. «Եվ խորհրդի առաջին վճիռն այս հաստատվեց. «Հարազատ եղբոր ձեռքը թող բարձրանա այն մերձավորի դեմ, որ դուրս է եկել Աստծու պատվիրանի ուխտից. հայրը չխնայի որդուն, և որդին չակնածի հոր պատվից: Կինը կռվի իր ամուսնու դեմ, և ծառան դիմադրի իր տիրոջը: Աստվածային օրենքը թագավորի ամեն բանում, և նույն օրենքից հանցավորներն ստանան իրենց դատապարտությունն ու պատիժը»¹⁵:

Նույնն է նաև այն փաստը, որ Վասակ մարզպանը իր մատանիով կնքում է բոլոր նամակները, որոնք ռազմական օգնություն էին խնդրում Հունաց արքունիքից, Անտիոքի սպարապետից, Ծովքից, Աղձնիքից և այլ վայրերից:

Վասակը եղել է սրբազան ուխտի մեջ և հետո է հեռացել դրանից ու չի մասնակցել Ավարայրի հերոսամարտին:

Եթե Ղազար Փարպեցին մի քանի անգամ կրկնում է, թե Վասակն ուզում էր Հայոց թագավոր դառնալ, ապա այդ մասին Եղիշեն գրում է լոկ մեկ անգամ: Վասակի թագավոր դառնալու ցանկության մասին խոսում է անգամ Ղևոնդ երեցը՝ սրբազան ուխտի մարմնացումը. «Նրան պատասխանելով սուրբ Ղևոնդն ասաց. «Այն դեռ, որ խաբելով հրահրեց քեզ նենգել սուրբ Ավետարանին տված ուխտի դեմ, հիմա էլ քեզ մտածել է տալիս, թե այժմ միայն Հայոց աշխարհի թագավորությամբ Արյաց արքունիքը կարող է անել քո վաստակների արժանի հատուցումը: Նրանք փոխարենը քեզ ոչինչ չեն կարող տալ: Բայց, արդարև, թե դու կենդանի գլուխդ ուսերիդ վրա տանես Հայաստան, կնշանակի՝ Աստված ինձ հետ չի խոսել»¹⁶:

Եղիշեն իր պատմության նպատակն է դարձրել Վարդան Մամիկոնյանի կերպարի օրինակ դարձնելը հայերի հետագա սերունդների համար: Խիստ հակադիր պատկերված է մարզպան Վասակ Սյունեցին, որի վարքագիծը պատմիչը մերժում է, նրան որակում ամենա-

¹⁵ Եղիշեն, Նշվ. աշխ., էջ 115:

¹⁶ Ղազար Փարպեցի, Նշվ. աշխ., էջ 183:

մերժելի ու նույնիսկ զգվելի գույներով: Նա չի թաքցնում, թե այս մատ-
յանը կարդացողը նգովք է կարդալու Վասակի անվանը և նրա դավա-
ճանական գործին հետևող չի լինելու. «Եվ նա, որ հանցագործութ-
յամբ ուզում էր Հայոց աշխարհի վրա թագավոր լինել, նրա գերեզմանի
տեղն էլ չգտնվեց, որովհետև մեռավ ինչպես շուն և քարշ տրվեց ինչ-
պես էշ: ...Այս հիշատակարանը գրվեց նրա մասին՝ նրա հանցանքնե-
րը կշտամբելու և նրան մեղադրելու համար, որպեսզի ամեն մարդ, որ
լսի և իմանա այս բանը, նգովք կարդա նրա հետևից և նրա գործերին
ցանկացող չլինի»¹⁷:

Նույն վայրում, նույն ձևով են ներկայացնում Ավարայրի հերո-
սամարտը երկու պատմիչներն էլ: Նրանք թվարկում են նույն քանակի
զոհեր՝ հայկական և պարսկական կողմերից: Սակայն ճակատամար-
տի ելքը Եղիշեն բնորոշում է՝ քաջերը քաջերին հանդիպելով, երկու
կողմերն էլ պարտություն կրեցին: Մինչդեռ Փարպեցին նշում է, թե
հայերը պարտվել են, նույնիսկ հայկական կողմից փախուստի դեպ-
քեր են եղել¹⁸: Երկու պատմիչներն էլ նշում են, թե պարսիկներից զո-
հեր երեք անգամ շատ են եղել:

Փարպեցին կրկնում է նույն նահատակված հայ նախարար-
ների ցանկը՝ Վարդան Մամիկոնյանը, Խորխոռունի Խորենը, Պալուն-
յանց Արտակը, Գնթունյաց Տաճատը, Դիմաքսյանց Հմայակը, Քաջբե-
րունյաց Ներսեհը, Գնունյաց Վահանը, Սրվանձտյա Գարեգինը, Ըն-
ծայնոց Արսենը¹⁹:

Ե՛վ Եղիշեն, և՛ Փարպեցին վկայում են, թե Հազկերտ Երկրոր-
դը Ավարայրի ճակատամարտից հետո զոհված և գերի տարված նա-
խարարների կանանց ոռձիկ է նշանակում պետական գանձարանից
ու այլևս դավանափոխության պահանջ չի դնում: Հավանաբար այս
հիմքով Դերենիկ Դեմիրճյանը «Վարդանանց պատերազմը» հետազո-
տության մեջ եզրահանգում է, թե հայերը չեն պարտվել, այլ հաղթել

¹⁷ Եղիշեն, Նշվ. աշխ., էջ 283:

¹⁸ Ղազար Փարպեցի, Նշվ. աշխ., էջ 169:

¹⁹ Նույն տեղում, էջ 170:

են. «Իսկ կապվածների կանայք կամովին կապեցին իրենց մարմնավոր ցանկությունները և հաղորդակից եղան սուրբ կապվածների չարչարանքներին. իրենց կյանքում նմանվեցին մեռած քաջ նահատակներին. և հեռվից մխիթարիչ վարդապետներ եղան բանտարկվածներին: Իրենց մատներով աշխատեցին ու կերակրվեցին և թագավորից նրանց համար նշանակված ռոճիկը տարեցտարի թռչակ էին անում և նրանց ուղարկում մխիթարելու համար»²⁰:

Եղիշեի պատմության երկու դրվագները՝ Ավարայրի ճակատամարտը և Հայոց աշխարհի փափկատուն տիկնանց նկարագիրը, հայ միջնադարյան գրականության գեղարվեստական արձակի ընտիր հատվածներից են: Եղիշեն ոգևորությամբ է ներկայացնում հայերի հերոսացումը Ավարայրի ճակատամարտում և պատկերում է այնպիսի հնարներով, որ դրանք մնում են անմոռաց ընթերցողների հիշողության մեջ. «Այս մեծ տագնապի մեջ դեպի վեր նայեց քաջ Վարդանը և տեսավ, որ Պարսից զորքի ընտիր-ընտիր քաջ զորականները Հայոց ձախ կողմն ընկճեցին: Նա մեծ ուժով հարձակվեց այն տեղը և Պարսից զորքի աջ թևը ջարդելով՝ քշեց գազանների կողմը և շուրջը պատելով կոտորեց մինչև նույն տեղը: Եվ այնպիսի տագնապ ու իրարանցում գցեց նրանց մեջ, որ մինչև անգամ Մատյան գնդի հաստատուն կազմակերպությունը քայքայվեց ու ցրիվ եկավ, և նա դեռևս պարտություն չկրած՝ փախուստ տվեց»²¹:

Փարպեցու պատմության մեջ շարունակ շեշտվում է Վարդան Մամիկոնյանի կրոնական նվիրվածությունը: Նույն նվիրվածությունից բացի Եղիշեն դնում է սպարապետի, զինվորական առաջնորդի, ազգային-ազատագրական պատերազմի ղեկավարի խոսքը, որն արդիական է բոլոր ժամանակների համար. «Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ո՛չ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք, որպեսզի եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա

²⁰ Եղիշե, Նշվ. աշխ., էջ 407-409:

²¹ Եղիշե, Նշվ. աշխ., էջ 237:

ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»²²:

Այս մարտական ոգու ազդարարը Եղիշեի գրքում ուղենշային պատգամ է՝ «Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը անմահություն»։ Բմաստախոսության հեղինակը անտիկ փիլիսոփա Հերմես Եռամեծն է։ Ակադեմիկոս Սեն Արևշատյանը համոզված է, որ Եղիշեի վրա մեծ ազդեցություն է թողել հելլենական աշխարհի փիլիսոփայությունը, որի վառ ներկայացուցիչն է Հերմես Եռամեծը²³։ Ավարայրի դեպքերը պատմող երկու պատմիչներն էլ նշում են, թե զենքը ձեռքին հանուն հայրենիքի կռվել են բազում հոգևորականներ, դրանց թվում կաթողիկոս Հովսեփն ու Ղևոնդ երեցը, որոնք գերեվարվել են ու նահատակվել Պարսկաստանի Նյուշապոտի քաղաքում²⁴:

Եղիշեի և Փարպեցու պատմության դրվագները հետագայի հայ գրականության մեջ

Եղիշեի ու Փարպեցու պատմությունները հայ միջնադարի, նոր և նորագույն շրջանի գրողների սիրելի գրքերից են։ Փաստացի, Ավարայրի հերոսամարտը չի մոռացվում և չի էլ մոռացվելու։ Հենց միջնադարում այն անցել է Յայսմավուրքների մեջ և հատկապես Եղիշեի՝ Ավարայրի ճակատամարտի նկարագիրը կարելի է տեսնել բազմաթիվ Յայսմավուրքներում։

Ներսես Շնորհալին Վարդան Մամիկոնյանին ու Ավարայրի հերոս նահատակներին ձոնել է շատ գեղեցիկ շարական՝ հորինելով նաև վերջինիս մեղեդին։ Այդ շարականն այսօր էլ երգում են հայկական եկեղեցիներում՝ Վարդանանց տոնի առթիվ։

*Նորահրաշ պսակավոր և առաքինիների գորագլուխ,
Հոգով զինավառվեցիր արիաբար՝ ընդդեմ մահու,*

²² Նույն տեղում, էջ 205-207:

²³ С. Арешатян, Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Ереван, 1973, с.128

²⁴ Եղիշե, Նշվ. աշխ., էջ 357-361:

*Վարդա՛ն, քաջ նահատակ, որ զարկեցիր թշնամուն,
Վարդագույն արյամբ քո պսակեցիր եկեղեցին²⁵:*

Ներշնչված Եղիշեի պատմությամբ և Ավարայրի հերոսամարտով՝ Ղևոնդ Ալիշանը աշխարհաբար գրել է «Պլպուլն Ավարայրի» պոեմը, որպեսզի բոլորին հասկանալի լինի, որ հայերը երբեք չեն մոռանա Վարդան Մամիկոնյանին:

*Կանչե՛, արլպուլիկ, կանչե՛ հոգեձայն,
Որ յերկնուց ի վայր, հայի և Վարդան,
Հիշե՛ զՀայաստան՝ տուն յուր սիրական,
Հայաստան հիշե՛ գյուր Կարմիր Վարդան²⁶:*

Ազդված Ալիշանի վերոնշյալ ստեղծագործությունից՝ Ռաֆայել Պատկանյանը գրում է «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» վիպասանությունը, որի «Վարդանի երգը» հատվածում պայքարի կոչ է անում նոր ժամանակների թշնամու դեմ: Թշնամին դավով ու հրապուրանքով տիրել է մեր երկրին ու նրա վրայից ջնջել Հայկի անունը, իլել է արքայական թագը, զենքերը և խոսքի իրավունքը: Հնչում է խիստ արդիական: Եվ ահա բանաստեղծի հրահանգ պատգամը.

*Թո՛ղ ի լրո՛ռե մունջը, անդամալուծը,
Կամ՝ որոց քաղցր է թըշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թըշնամու առաջ
Գոնե մեր փառքը մահով ետ խրլենք –
Ու այնպես լրո՛ռենք²⁷:*

Ի պատասխան Ռ. Պատկանյանի բանաստեղծական հարցմանը, ըստ Փարպեցու պատմության, հնչում է Մ. Նալբանդյանի «Մա-

²⁵ Ներսես Շնորհալի, Երգեր, Եդեսիայի ողբը, առաջաբ. և թարգմ.՝ Լ. Միրիջանյանի, Երևան, 1982, էջ 59:

²⁶ Ղևոնդ Ալիշան, Նվագներ, Երևան, 1957, էջ 43:

²⁷ Ռ. Պատկանյան, Երկեր, Երևան, 1980, էջ 71-72:

միկոնյան մեծ Վահանի պատասխանը» քերթվածը: Նրանում Նալ-բանդյանը հայրենի պետականության կորստի պատճառը տեսնում է հայի ազգային արժանապատվության ու գիտակցության կորստի մեջ.

*Էլ մեր երեսին մնա ջ մի կաթիլ
Ամոթի սուրբ ջուր, որ բերան բանանք:
Ո՛չ, թե չենք ուզում հողից հող կորչիլ,
Թշնամու արյունով մեր թրին ջուր տանք,
Ազգ, եկեղեցի փրկենք, ազատենք,
Ապա թե՛ խոսենք²⁸:*

Անշուշտ, Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» Ավարայրի հետ կապված դեպքերի հիման վրա է 1887 թ. Հովհ. Հովհաննիսյանը գրել «Սյունյաց իշխանը» բանաստեղծությունը՝ չնայած քերթվածի բնաբանը վերցրել է Եղիշեից: Նրանում պատկերված է Վասակի ինքնախարագանումը Պարսկաստանի բանտում.

*- Ո՞վ մատնիչ... Վասա՞կ, շարժվեցե՛ք պատե՛ր,
Տե՛ղ, կարկո՛ւտ, մրրի՛կ, զարկեցե՛ք գլխիս,
Դու, հավատարի՛մ պողպատ, իմ ընկե՛ր,
Կուրծքըս պատառի՛ր, - արյունը սըրտիս
Թող սև հեղեղով հերքըս լըվանա,
Ճակատիս դընե անեծքի կընիք,
Թող դարեր անցնեն, աշխարհն իմանա -
Անարգ Վասակը մատնեց հայրենիք...²⁹*

Եղիշեի ու Ղազար Փարպեցու պատմությունների կատարյալ գեղարվեստական մեկնությունը տվել է Դերենիկ Դեմիրճյանն իր «Վարդանանք» հրաշալի պատմավեպում:

²⁸ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հտ. 1, Երևան, 1979, էջ 127:

²⁹ Հ. Հովհաննիսյան, Երկեր, Երևան, 1959, էջ 91:

Եզրակացություն

451 թ. մայիսի 26-ին Մեծ Հայքի Արտագ գավառի Ավարայր դաշտում՝ Տղմուտ գետի ափին, տեղի ունեցած ազգային-ազատագրական, ինքնապաշտպանական պատերազմը Մասանյան Պարսկաստանի դեմ մեզ ավանդել են V դարի երկու պատմիչներ Եղիշեն և Ղազար Փարպեցին: Երկու պատմիչներն էլ Մամիկոնյանների պատվերով են գրել իրենց երկերը: Եղիշեն դեպքերի ականատեսն ու մասնակիցն է, Ղազար Փարպեցին՝ Մամիկոնյանների մտերիմ բարեկամը:

Նրանք երկուսն էլ կրթություն են ստացել արտասահմանում, եղել են հոգևորականներ, որոնք իրենց կրթական մակարդակով բարձր են եղել շատ շատերից: Երկու մեծ հայրենասեր մատենագիրներն անմահացրել են Ավարայրի հերոսամարտը և նրա նահատակներին: Այդ երկու պատմիչների երկերը լրացնում են միմյանց ու սկզբնաղբյուր են հայ ժողովրդի պատմությունը գիտականորեն մեկնաբանող պատմաբանների համար: Նրանց գործերի հիման վրա գրվել են բազմաթիվ արձակ և չափածո գեղարվեստական ստեղծագործություններ, դրամաներ, ստեղծվել արվեստի գլուխգործոցներ, ինչպես հանճարեղ Երվանդ Քոչարի Վարդան Մամիկոնյանի արձանը՝ տեղադրված Երևանում և Գրիգոր Խանջյանի «Ավարայրի ճակատամարտը» հզոր, ներգործուն ուժ ունեցող նկարը, որը կարելի է տեսնել Գաֆեսճյան կենտրոնում:



ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

*Խ. Արքովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան գրականության
և նրա դասականիզման մեթոդիկայի
ամբիոնի դոցենտ,
Մանկավարժական գիտությունների
թեկնածու*

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ԹՂԹԻ»

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈԳԻՆ

*Մեկն ընկնում է, մյուսները հետևում են նրան,
Բայց ես ընկնում եմ չհաղթված,
Եվ իմ զենքերը չեն կոտրված...
Հենրիխ Հայնե*

Ներածություն

Թուղթ գրական տեսակը հայ մատենագրության մեջ առկա է հենց Ոսկեդարից: Հենց այս շրջանից մեզ են հասել մի շարք մեծարժեք թղթեր: Թղթի գրական տեսակի մասին գրել են շատերը: Այն ընդունված է նաև Նոր Կտակարանում, ուր զետեղված են Պողոս, Պետրոս, Հովհաննես առաքյալների թղթերը¹:

Առանձնացնենք հինգերորդ դարի նշանավոր պատմահայր Մովսես Խորենացու «Թուղթ առ Սահակ Արծրունի» քերթվածը, որը պատասխան է հետաքրքրասեր Սահակ Արծրունի իշխանին, թե ինչ հանգամանքներում է Բարդուղիմեոս առաքյալը Մարիամ Աստվա-

¹ Նոր Կտակարան, արևելահայ նոր թարգմանություն՝ համեմատությամբ հունարեն բնագրերի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1975, էջ 409-664:

ծածնի փայտի վրա իրական պատկերված նկարը բերել Հայաստան ու գետեղել Հոգեաց վանքում²:

Բարեբախտաբար, պահպանվել և մեր օրերն է հասել Սահակ Արծրունու գրած «Թուղթը», որից երևում է, թե նա ծանոթ է Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը», Մեծ Հայքի նախարարական տների ձևավորմանը. դա հայտնի դարձավ Բագրատունի Սահակ իշխանի՝ «Հայոց պատմության» պատվիրատուի շնորհիվ³:

VIII դարում՝ հայ հոգևոր կյանքի վերելքի ժամանակ, կազմվել է «Գիրք թղթոց» ժողովածուն, որում ի մի են բերվել V, VI, VII դարերի դավանաբանական թղթերը: Որոշ թղթեր գրված են VIII դարում: Մ. Աբեղյանն այդ թղթերը գրական-գեղարվեստական տեսանկյունից համարում է անկարևոր, սակայն նշում է, որ դրանք ունեն ճանաչողական մեծ արժեք⁴:

Բնականաբար, Ղազար Փարպեցու «Թուղթը»՝ ուղղված ժամանակի մարզպան Վահան Մամիկոնյանին, տեղ չի գտել «Գիրք թղթոց» ժողովածուում՝ վերջինիս Հայաստանի եկեղեցու տգետ հոգևորականների դեմ ուղղված խիստ քննադատության պատճառով: Գուցե հենց նույն պատճառով էլ հոգևոր գրիչներն այն չեն բազմացրել, և մեզ է հասել թղթի միակ օրինակը: Թե որ դարում է այն ընդօրինակվել, անհայտ է:

Հետագայում հայ մատենագրության մեջ գրվել են շատ մեծարժեք թղթեր: Դրանց հեղինակներին առանց որևէ վերապահության կարելի է համարել հանճարներ: Նշանավոր թղթերի հեղինակներ են

² Մովսես Խորենացի, Մատենագրութիւն, Վենետիկ, 1843, էջ 283-296:

³ Ա. Դուլովյանյան, Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, Երևան, 212, էջ 124:

⁴ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին. Մկզբից մինչև Ժ դար, Անթիլիաս, 2004, էջ 382: Մ. Աբեղյանը գրում է. «Դրանց մեջ տեսնում ենք հեղինակների հմտությունը դավանաբանական և այլ խնդիրների նկատմամբ, նրանց ձգտումն ամեն եռանդով պաշտպանելու հայոց եկեղեցու դավանությունը, անկախությունն ու միությունը, ջանքերը, որ վրաց և աղվանից եկեղեցիները չանջատվեն հայոց եկեղեցուց և այլն (նույն տեղում):

Գրիգոր Նարեկացին (X դար), Գրիգոր Մագիստրոսը (XI դար)⁵, Ներսես Շնորհալին (XII դար):

Ո՞վ է գտել Ղազար Փարպեցու «Թուղթը»

Մեզ հայտնի որևէ աղբյուր չի փաստում, թե Ղազար Փարպեցին գրել է որևէ «Թուղթ»: XIII դարի երկու պատմիչները՝ Վարդան Արևելցին և Կիրակոս Գանձակեցին, հիշատակում ունեն Ղազար Փարպեցու մասին: Վարդան Արևելցին Ղազարին համարում է պատմիչ, որը Մովսես Խորենացու, Եղիշեի, Մամբրեի և մյուս աշակերտների հետ ուղարկվում է արտասահման՝ բարձրագույն կրթություն ստանալու⁶: Միքայել Նալբանդյանը հերքում է այս տեղեկությունը, որովհետև ըստ նրա՝ Փարպեցին ծնվել է 440 թվականների սկզբին:

Կիրակոս Գանձակեցին Ղազար Փարպեցուն համարում է Հայաստանի մարզպան Վահան Մամիկոնյանի ժամանակակիցը և նրան որակում որպես ճարտասան և պատմագիր⁷: Գուցե նա ծանոթ է եղել Ղազար Փարպեցու «Թղթին», որը ճարտասանական մի իսկական գլուխգործոց է, սակայն այդ մասին լռում է:

Ղազար Փարպեցու «Թղթին» անդրադարձ չունի նաև հայ միջնադարի մեծ գիտակ Միքայել Չամչյանցը, որն իր «Հայոց պատմություն» կոթողային աշխատության Բ. հատորում երկար խոսում է Փարպեցու պատմության մեջ եղած դեպքերի մասին, լռում է և ոչինչ չի խոսում նրա «Թղթի» վերաբերյալ⁸: Պատճառը մեկն է, նրան ծանոթ չէր «Թղթի» բնագիրը: Ղազար Փարպեցու «Թուղթը» էջմիածնի մատենադարանում հայտնաբերել է էջմիածնի միաբանության անդամ Հով-

⁵ Գրիգոր Մագիստրոսից մեզ հասած 83 թղթերը (մեծ մասը համառոտ) ֆրանսերեն թարգմանել է Վիկտոր Լանգլուան և հրատարակել Փարիզում 1869 թ.: Տե՛ս V. Langlois, Memoire sur la vie et les écrits du prince Grégoire Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869: Ավելի մանրամասն տե՛ս Ա. Դուրխանյան, Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003, էջ 22-47:

⁶ Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 86-87:

⁷ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 37:

⁸ Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն, հտ. Բ., Երևան, 1984, էջ 156-214:

հաննես Շահխաթունյանցը (1799-1849 թթ.): Նա Էջմիածնի մատենադարանի վարիչն էր, հնագետ, պատմաբան, մատենագետ: Ծագումով ազնվական էր և հեղինակություն էր ոչ միայն հայ բանասերների, գրողների, պատմաբանների շրջանում, այլև օտարազգի հայագետների մոտ: Նա կազմել է Էջմիածնի ձեռագիր մատյանների ցուցակը, որը նշանավոր ֆրանսիացի հայագետ Մարի Ֆելիսիտե Բրոսսեն թարգմանել է ֆրանսերեն ու ռուսերեն և տպագրել 1840 թ.⁹: Այդ ցուցակը կազմելու ժամանակ Շահխաթունյանցը գտնում է Փարպեցու «Թղթի» միակ պահպանված օրինակը, որն ինչ-որ մի հոգատար ձեռք կցել էր Փարպեցու «Հայոց պատմությանը» և փրկել կորստից: Մ. Նալբանդյանը՝ Փարպեցու «Թղթի» առաջին թարգմանիչը, սեփական աչքերով տեսել է «Թղթի» այդ միակ օրինակը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում. «Մեզ, նույնպես, պատահեցավ տեսնել այդ Թղթի մի ձեռագիր օրինակը Ս. Էջմիածնի մեջ, արժ. Դանիել վարդապետի մոտ, բայց ավա՜ղ, այն ուրիշ օրինակ չէր, այլ բո՛ւն գրչագրիցը արտագրված, որով չէին պարզվում աղճատված կամ մութ տեղերը, չէր լցվում նույնպես թերթերի պակասությունը»¹⁰: Թարգմանչի համար բնագիր է հանդիսացել 1853 թ. Մկրտիչ Էմինի ջանքերով Մոսկվայում տպագրված գիրքը¹¹:

Մ. Նալբանդյանը «Թուղթը» թարգմանել է, երբ բանտարկված էր Պետրոպավլովյան ամրոցում: Այն առաջին անգամ տպագրել է Միքայել Տեր-Գրիգորյանը 1868 թ.¹²: Հետագայում շատերն են անդրադարձել Փարպեցու «Թղթին»: Այն դարձել է ուսումնասիրման առարկա հայ բարձրագույն դպրոցների բանասիրական և պատմության ֆակուլտետներում: Մ. Նալբանդյանը, որպես հեղափոխական դեմոկրատ, գրականագետների ուշադրության կենտրոնում է եղել թե՛

⁹ Ավելի մանրամասն տե՛ս Ա. Դուրխանյան, Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ, Երևան, 2002, էջ 64-68:

¹⁰ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հտ. 4, Երևան, 1983, էջ 322:

¹¹ Նույն տեղում, էջ 517:

¹² Նույն տեղում, էջ 518:

խորհրդային տարիների միջնակարգ դպրոցում, թե՛ բուհերի մասնագիտական ֆակուլտետներում:

1979 թ. լույս է տեսել Սերգեյ Դարոնյանի «Միքայել Նալբանդյան. կյանքը և գործունեությունը» ծավալուն (542 էջ) հետազոտությունը, ուր կարդում ենք. «Էջմիածնում գտնված կարճ ժամանակամիջոցը Նալբանդյանն օգտագործեց նաև ծանոթանալու Փարպեցու «Թղթի» ձեռագրերից մեկին, որը հետագայում Պետրոպոլիտյան ամրոցում թարգմանեց աշխարհաբար (III, 249 էջ)»¹³:

Հետազոտողը ուշադիր չի եղել այն փաստին, որ Փարպեցու «Թղթից» հասել է ընդամենը մեկ ձեռագիր և ոչ թե՛ ձեռագրեր:

Փարպեցու «Թուղթը» հանգամանալի մեկնաբանել է Մանուկ Աբեղյանն իր «Հայոց հին գրականության պատմություն» աշխատության առաջին գրքում¹⁴:

Ցավոք, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հրատարակած «Հայ միջնադարյան ժանրեր» արժեքավոր ժողովածուում թղթի ժանրը հետազոտության նյութ չի հանդիսացել¹⁵:

Ղազար Փարպեցու «Թղթի» քննադատական ոգին

Ղազար Փարպեցու «Թուղթը» ոչ միայն պատմական, գրական-գեղարվեստական, ճանաչողական կարևոր վավերաթուղթ է, այլև դրան ենք պարտական, որ այսօր հայ պատմագրությունն ունի նույն հեղինակի մեծարժեք «Հայոց պատմությունը»: Եթե Ղազարը հեռավոր Ամիդից Մեծ Հայքի մարզպան, իր մանկության ընկեր Վահան Մամիկոնյանին չգրեր այս իմաստուն «Թուղթը», չէր պարզվի ճշմարտությունը, նա մարզպանի շրջահայեցության շնորհիվ չէր վերադառնա հայրենիք ու նրա պատվերով չէր գրի «Հայոց պատմությունը»:

¹³ Ա. Դարոնյան, Միքայել Նալբանդյան, Երևան, 1979, էջ 323:

¹⁴ Մ. Աբեղյան, Նշվ. աշխ., էջ 330-335:

¹⁵ Հայ միջնադարյան գրական ժանրեր, խմբ.՝ Վ. Ներսիսյան, Հ. Բախչինյան Երևան, 1984, 427 էջ:

Ինչպես նկատել է Մ. Նալբանդյանը, «Թղթի» սկզբում դրված է մի իմաստուն առաջաբան, որը Ղազարը չի գրել, այլ գրվել է հետագայում՝ «Թղթի» արժեքը հասկացող մի մտավորականի կողմից: Առաջաբանի հեղինակը Ղազարին համարում է այն երանելի մարդկանցից, որը երեխա հասակից աչքի է ընկել ուսումնաստենչությամբ՝ «Յունաց աշխարհը գնաց, և այն տեղ լավ և առաքինի մարդերի ձեռքի տակ ուսանելով և աստուածային խօսքի մարգարիտը կատարելապես իր մեջ ընդունելով, վերադարձաւ իր աշխարհը»¹⁶:

Առաջաբանը գնահատականի խոսք է՝ ուղղված և՛ Ղազար Փարպեցուն, և՛ Վահան Մամիկոնյանին:

Մ. Նալբանդյանը բազմիցս նշում է, որ պատմիչը լայնորեն օգտվել է թե՛ Աստվածաշնչից, թե՛ առաքյալների թղթերից: Ղազարը մարգպանին հիշեցնում է, որ նա տղայության ժամանակ ապրել է մարգպանի կողքին, և իր վարքը մարգպանին լիովին ծանոթ է:

Թուղթը պարունակում է բավարար հարուստ ինքնակենսագրական փաստեր: Ուսանել է Հունաստանում, այնտեղից վերադառնալուց հետո ապրել Կամսարականների մոտ: Հետո տեղափոխվել է Սյունյաց աշխարհ: Պատանեկության տարիներն անցել են Աշուշա Բդեշխի տանը՝ Վրաստանում: Ղազարի դաստիարակությամբ զբաղվել է ապագա մարգպանի մայրը՝ Անուշվոռամը:

Ղազարը եղել է Ս. Էջմիածնի Կաթողիկե եկեղեցու վանահայրը և որպես օրինակելի ու կարգապահ հոգևորական՝ իր գործը վարել է արդար՝ մշտապես պահպանելով հոգևոր գործչին վայել կենցաղավարություն: Այս խիստ կարգապահությունը առաջացրել է տգետ արեղանների դժգոհությունը. նրանք այրել են եկեղեցու փայտաշեն շինվածքը, մեղքը գցել Ղազարի վրա և նրան վռնդել վանքից:

Իր «Թղթում» Ղազարը մարգպանին անկողմնակալ ձևով բացատրում է, թե ինչն է իր հալածանքների պատճառը: Նա Հին Կտա-

¹⁶ Ղազար Փարպեցու գրած թուղթը: Մեղադրություն ստախօս արեղաներին, թարգմանություն և բացատրությունք Միքայել Նալբանդեանց, տպագրություն Մ. Տեր-Գրիգորեանց, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 2:

կարանից փաստեր է բերում, թե ինչ ոճիրներ են գործվել մարդկանց միջև նախանձի պատճառով: Աղամի երկու որդիներից Կայենը սպանել է Աբելին՝ դառնալով եղբայրասպան: Ղազարը ի նկատի ունի Հին Կտակարանի հետևյալ հատվածը. «Եւ Կայէն իր Հաբէլ եղբորը հետ խօսեցաւ. ու եղաւ որ երբ անոնք դաշտն էին, Կայէն իր Հաբէլ եղբորը վրայ ելաւ ու սպաննեց զանիկա: Եւ Տէրը Կայէնի ըսաւ. Ու՞ր է քու եղբայր Հաբէլ: Եւ անիկա ըսաւ. Չեմ գիտեր, միթէ ես իմ եղբօրս պահպանն եմ: Եւ Տէրը ըսաւ. Ի՞նչ ըրիր. քու եղբօրդ արինին ձայնը գետնէն ինծի կը բողոքէ: Եւ հիմա դուն անիծեալ ես երկրէ, որ իր բերանը բացաւ եղբօրդ արինը քու ձեռքէդ ընդունելու»¹⁷: Ղազարը իրական կյանքում նախանձի կործանարար հետևանքները Հին Կտակարանում ներկայացնելուց հետո անցնում է Նոր Կտակարանին և պատմում, թե ինչպես Պիղատոսը, հասկանալով, որ հրեաները Հիսուսին մատնեցին մահվան նախանձի պատճառով, լվանում է ձեռքերն՝ ասելով. «Ես անպա՛րտ եմ այդ մարդու արինից, որովհետև մահի արժանի յանցանք բնա՛վ չգտայ դորանում, դու՛ք առէք և ձեր օրէնքով դատեցէք»¹⁸: Մատթեոսի Ավետարանում հատվածն այսպես է. «Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողովրդեանն և ասէ. Քաւեալ եմ ես յարենէ արգարոյդ այդորիկ, դուք գիտասցիք»¹⁹:

Նման օրինակներից հետո Ղազարը ներկայացնում է այն մեղադրականները, որոնք տգետ արեղաները ուղղել են իրեն: Դրանցից առաջին երկուսն ամենավտանգավորն էին և բավական էին, որ Փարպեցին դատապարտվեր:

Առաջինն այն էր, իբր Ղազարը պոռնկությունը մեղք չի համարել, իսկ երկրորդը՝ իբր Ղազարն աղանդավոր է: Ղազարը հմուտ իրավաբանի նման կարողանում է ներկայացնել այդ մեղադրանքների

¹⁷ Գիրք Օսնդոց, գլ. Դ., 8-11: Տե՛ս Աստուածաշունչ: Հին Կտակարան, Կ. Պոլիս, 1913, էջ 4:

¹⁸ Ղազար Փարպեցու գրած թուղթը, էջ 7:

¹⁹ Մատթեոս 24-25: Տե՛ս Նոր Կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Աւետարան Մատթեոսի, գլ. ԲԷ, Կ. Պոլիս, 1913, էջ 74:

սին լինելը և իրականությանը չհամապատասխանելը: Այդ տգետ արեղաները, որոնք կորած են մեղքերի մեջ, տեսնելով Ղազարի անբասիր վարքը և դժգոհ նրա գործելաոճից, նախանձից դրդված, իրենց արատները բարդել են Ղազարի վրա:

Պատմիչը մարգպանին բացատրում է, թե տգետ արեղաները նույնիսկ չգիտեն, թե ինչ է նշանակում աղանդավոր լինել, որովհետև տարբեր աղանդների մասին գրված են նշանավոր հույն աստվածաբանների գրքերում: Տգետ արեղաները հունարեն չգիտեն, որպեսզի այդ գրքերը կարդան, մինչդեռ ինքը դրանք կարդացել է և իր գրադարանում ունի նրանց գրքերը. «Բայց ե՛ս, իմ կարողության չափով, Յունական գիտությանց պարապելով, իմ տկա՛ր մտքի զօրելու համեմատ, կարդացա՛ծ եմ գրուածքը սու՛րբ մարդոց, որ Սուրբ Հոգու զէնքով զինված, աղանդաւոր վարդապետութեանց հոգեսպան սուրերը այդ վարդապետութիւնքը հնարողների սրտերին դէմ դարձնելով, նոցա աղեղները փշրեցին»²⁰:

Ղազարը թվարկում է իր նախընտրած աստվածաբանական գրքերի հեղինակներին՝ Աթենաս Ալեքսանդրացի, Կյուրեղ Ալեքսանդրացի, Կյուրեղ Երուսաղեմացի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի²¹:

«Թղթից» իմանում ենք, որ Հայաստանում եղել են աղանդավորներ: Աղանդավորության մեջ կասկածվել է մեկը, որին Ղազարը ճանաչել է և որին դատել են տգետ արեղաները: Մակայն Ղազարի կարծիքով տգետ արեղաները նրան դատում էին համբավի հիման վրա՝ չունենալով փաստեր: Ինքը չի մասնակցել այդ դատավարությանը՝ ասելով, թե «...լոկ համբաւի վրա հիմնվելով դատե՛լ կամ դատա-

²⁰ Ղազար Փարպեցու գրած թուղթը, էջ 10:

²¹ Նույն տեղում, էջ 10: Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Նազիանզացին հույն աստվածաբաններ են, որոնք միասին կազմել են (IV դ.) «Սուրբ Գիրքը և նրա մեկնաբանը Որոգիները», տե՛ս Հանրագիտական բառարան, հտ. 1, Երևան, 2016, էջ 520:

պարտե՛լ, բնա՛ւ կամք չունէի, ուստի, չարաթոյն մարդիկը, կարծու՛մ էին, թէ ե՛ս էլ նոցա նման եմ»²²:

Իրավաբանական առումով Փարպեցին եղել է իրավացի: Այդ իսկ պատճառով Մ. Աբեղյանը, հիացած Փարպեցու ճարտասանական հմտությամբ, եզրահանգում է. «Եվ ամենը նա ասում է այնպիսի նրբամտությամբ ու փաստարկումով, նյութի մասերի այնպիսի դասավորությամբ, որ իսկապէս իմացվում է «ճարտասանությունը», և ընթերցողը համոզվում է նրա անմեղությանը և տեսնում նրա թշնամիների ոչնչությունը»²³:

Փարպեցին խիստ քննադատում է նաև ժամանակի կաթողիկոսին՝ չտալով նրա անունը: Բանասերները համոզված են, որ խոսքը Բաբկեն Ա. Ոթեմցու մասին է (490-516 թթ.), որը հաջորդել է նշանավոր Հովհաննես Մանդակունուն (478-490 թթ.): Բաբկեն Ա.-ն ոչ մի անգամ չի ընդունել ու չի լսել Ղազար Փարպեցուն: Փարպեցին ներկայացնում է տգիտության ուրիշ գոհերի, որոնցից մեկն էլ Մովսէս Խորենացին էր: «Թղթի» այս հատվածը շատ կարևոր է. այն հաստատում է, որ Մովսէս Խորենացին V դարի պատմիչ է. «Երանելի Մովսէս Փիլիսոփոսը (Խորենացին), որ արդարև, մինչդեռ մարմնով էր ապրում, գրեթէ երկնքի զօրքերին էր քաղաքակից. չէ՞ որ այդ Հայոց աբեղայքը այս տեղից այն տեղ հալածական արին նորան: Չէ՞ որ նորա լուսաւորող և տգիտութիւն հալածող գրքերը տգիտութեամբ Փաթաղիկէս»²⁴ էին կոչում»²⁵:

Ղազարի «Թղթում» ներկայացված է տգետ աբեղաների ծայրահեղ նյութապաշտությունը և որկրամոլությունը: Այդ տգետներն

²² Ղազար Փարպեցու գրած թուղթը, էջ 11:

²³ Մ. Աբեղյան, Նշվ. աշխ., էջ 331:

²⁴ Փաթաղիկէս բառը Ստ. Մալխասյանցը բացատրում է հետևյալ ձևով. «Փաթաղիկէս-ասորական բառ, նախատական կոչում, որ հինգերորդ դարում տգետ աբեղաները տալիս էին փիլիսոփա Մովսէսին. եղծված, մոլորված»: Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հտ. IV, Երևան, 2010, էջ 320:

²⁵ Ղազար Փարպեցու գրած թուղթը, էջ 20:

աչք էին դրել Սևուկի այգու վրա, վերջինիս վախճանվելուց հետո ուզում էին այն իրենց ձեռքը վերցնել և նույնիսկ փորձել են կաշառել մարգպանին, սակայն վերջինս գայրալից մերժել է նրանց:

Ղազարը հատուկ մատյանում գրանցում էր վանքի համար կատարվող ծախսերը, նաև հոգևորականների համար սնունդը կազմակերպում էր ըստ հոգևոր կանոնների՝ այսինքն խիստ չափավոր: Սա առաջացրել էր տգետ աբեղաների գայրույթը, որոնք կամենում էին սնվել ձկան աղիքներով ու հավի փորոտիքով²⁶:

«Թղթի» մանկավարժական դասերը

Փարպեցու «Թուղթը» մանկավարժական մեծ արժեք ունի: Նրանում շարունակ պաշտպանվում է ճշմարտությունը և դատապարտվում ստախոսությունը, որը խիստ կործանարար է:

Պաշտպանվում են մարդու իրավունքները և ներկայացվում են տգիտությունից ծնվող չարիքները: Ղազարը եղել է իր ժամանակի խիստ լուսավորյալ մարդկանցից և ստացել ընտիր կրթություն՝ յուրացնելով մի շարք լեզուներ և կարդալով բազում գրքեր: Նա ունեցել է սեփական գրադարան. բավական թանկ հաճույք այն ժամանակների համար, երբ գիրքը չափազանց թանկ արժեք ձեռագիր լինելու և մագաղաթի վրա գրված լինելու պատճառով: Նա նշում է, որ հունարեն գրքերը տգետ աբեղաները խլել են իրենցից, այն էլ այն դեպքում, երբ վերջիններս չգիտեին հունարեն և չէին կարող այդ գրքերը կարդալ. «Իսկ Աղուանստանից, Վրաստանից, Սիւնեաց և Արշարունեանց երկիրներից իմ բերած բաներս և ինչ որ բո՛ւն Տիրոջդ եղբորորդիներից ստացել էի, այդ բոլորը - իւրաքանչիւրի տուածը առանձին առանձին գրի անցուցած,- մնաց վանքում, և ինձ մե՛րկ և խայտառակութեա՛մբ դուրս հանեցին իմ բոլո՛ր ունեցած - չունեցածի միջից, ինչ որ տղայութեանս ժամանակից սկսած ժողովել էի: Մինչև անգամ և յունարեն գրքե՛րս ինձ չտուիին, որ ընկած են այժմ վանքում ցեցերի կերակուր լի-

²⁶ Ղազար Փարպեցու գրած թուղթը, էջ 15:

նելու համար. բայց արդեօք այդ գրքերը կարդալով պիտի լուսավորվի՞ն այդ տեղում բնակվողքը կամ ուրիշներին պիտի լուսաւորեն՞»²⁷:

Հայ կիներ Փարպեցու «Թղթում» երևում է որպէս մանկավարժ: Իր դաստիարակության համար Ղազարը հիշում է երկու ազնվական կանանց՝ Ձվիկին և Անուշվռամին: Ձվիկը Ավարայրի հերոսամարտում զոհված Վարդան Մամիկոնյանի եղբայր Հմայակի կինն էր, որն իր ամուսնու նահատակվելուց հետո տեղափոխվել էր Վրաստան՝ իր քրոջ մոտ, որը Աշուշա բդեշխի կինն էր:

«Թղթից» երևում է V դարում հայերի՝ ոչ միայն ազնվականների քաղաքակիրթ լինելը: Բաղնիքի մշակույթը հայերի մոտ ընդունված է եղել: Դրա համար էլ Փարպեցին տգետ արեղաներին համեմատում է այն փնթի հարսների հետ, որոնց կոյուղու ջուրը թվում է բաղնիք²⁸:

Այդ պիղծ գործերով լցված արեղաները, իրենց աչքի գերանին չնայելով, մոտենում են, որ ուրիշի աչքի շյուղը հանեն²⁹: Այս իմաստախոսությունը քաղված է Ավետարանից: Մատթեոսի Ավետարանում կարդում ենք. «Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո, և ի քում ական զգերանդ ոչ տեսանես: Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, թող հանից զշիւղդ յականէ քումմէ, և ահաւասիկ ի քում ականդ գերան կայ: Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեցիս հանել զշիւղն յականէ եղբօր քո»³⁰:

Հայտնի է, որ մարդկայի հասարակությունը կդառնա օրինակելի, եթե ապրի ըստ Աստվածաշնչի տասը պատվիրանների: Այդ պատվիրանները կան և՛ Հին Կտակարանում, և՛ Նոր Կտակարանում:

Հիսուսը հարուստ երիտասարդի մոտ, որպէս զգուշացում, կրկնում է Աստծու պատվիրանները. «զՄի՛ սպանաներն, և մի՛ շնար,

²⁷ Նույն տեղում, էջ 15:

²⁸ Ղազար Փարպեցու գրած թուղթը, էջ 11:

²⁹ Նույն տեղում, էջ 11:

³⁰ Մատթեոս 3-5: Տե՛ս Նոր Կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Աւետարան Մատթեոսի, գլ. Է, Կ. Պոլիս, 1913, էջ 14:

և մի՛ գողանար, և մի՛ սուտ վկայեր, պատուեա զհայր քո և զմայր և սիրեցես զընկեր քո իբրեւ զանձն քո»³¹:

Հռետորական ձիրքը խիստ կարևոր է եկեղեցում ժողովրդին քրիստոնեական սրբազան գրքերը քարոզելու և բացատրելու համար: Դրա համար պետք է լինեն հմուտ մանկավարժ, ուսուցիչ, որի խոսքն ազդեցիկ է, որի ասածը ընկալում են: Ղազարը տիրապետում էր հռետորական արվեստին. այն օրերը, երբ եկեղեցում ինքն էր քարոզում, վերջինս լիքն էր հավատացյալներով, իսկ երբ քարոզում էին տգետ աբեղաները, եկեղեցին դատարկ էր: Սա նույնպես գրգռում էր տգետներին:

Հայտնի է, որ բանավոր խոսքն ազդեցիկ է, երբ ոչ թե այն կարդում են գրքից, այլ ասում են բանավոր: Ղազարը, քաջատեղյակ Սուրբ Գրքի բովանդակությանը, իր խոսքը ժողովրդին ուղղում էր բանավոր ու հասնում ցանկալի արդյունքի: Տգետ աբեղաները Ղազարի մտավոր առավելությունը ներկայացնում էին որպես աններելի թերություն:

Ղազարը մարգպանին համարում է ուսուցիչ, որովհետև ուսուցիչ է եղել հենց Հիսուսը, որն իր ուսմունքը փոխանցել է աշակերտներին, անգամ խաչ բարձրացել՝ մարդկանց ճշմարտությունը հասու դարձնելու համար. «Ու՛ր է արդար ուսուցչի հոգոդութիւնը, ու՛ր է արդար հայրապետի Քրիստոսին նմանվելը: Արարածների արարիչը մեղաւորների փրկութեան համար մա՛րդ եղավ, շատ անարգութեան, գլխին զարկելու և երեսին թուք ընդունելու և փշեղէն պսակի և ուրիշ էլ անելի մեծ-մեծ բաների համբերեց, իսկ դա՛ վերքերից թուլացած մարդու երեսին և ջու՛ր անգամ ցանել չհամարձակվեցաւ մարդերից վախելով»³²:

Ղազարը, որպես եկեղեցու վանահայր, իր ժամանակին համարվել է եկեղեցու զարդ³³: Սակայն շատերին անհանգստացրել է, որ

³¹ Մատթեոս 18-20: Տե՛ս Նոր Կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Աւետարան Մատթեոսի, գլ. ԺԹ, Կ. Պոլիս, 1913, էջ 48:

³² Ղազար Փարպեցու գրած թուղթը, էջ 16:

³³ Նույն տեղում, էջ 17:

վանահայրը երիտասարդ է: Իր «Թղթում» հեղինակը բացատրում է, որ երիտասարդ հասակն իրեն բոլորովին չի խանգարել սրբազան գործին պիտանի լինելու:

Ղազարը բացատրում է, որ ինքն ունեցել է հիանալի ուսուցիչներ, որոնք սովորեցրել են ունենալ խորը գիտելիքներ. նրանք պահանջում էին Սուրբ Գիրքն անգիր իմանալ, ինչպես անհրաժեշտ էր անգիր իմանալ Դավթի հրաշք սաղմոսները. «Այդ մարդը գիրք չէ կարդում, բայց ընթերցուածը այնպես անսխալ ասում է, ինչպես գրքին մեջ գրված է: Այս էլ չկարողացան որ իմանային, թե որոնք որ լաւ գիտեն, Դավթի սաղմոսը պէտք է միայն ժամի միջոցին անսխալ իմանալ և ոչ թէ Աստուածաշունչը միշտ ձեռքը բռնած, հիմարացած մարդոց պէս այս ու այն խոսել»³⁴:

Դավթի Սաղմոսները ողջ միջնադարում եղել են սիրված հոգևոր սնունդ: Դրա վերաբերյալ ուշագրավ վկայություն ունի X դարի նշանավոր պատմիչ Թովմա Արծրունին, երբ խոսում է Սասունի Խոյոթ լեռան գյուղերի բնակիչների վարք ու բարքի մասին, ավելացնում է, թե այդ լեռնաբնակները որքան են սիրում Դավթի սաղմոսները. «Անգիր գիտեն հայոց վարդապետների թարգմանած հին սաղմոսները, որ մշտապես ունեն շուրթերին»³⁵:

Եզրակացություն

Ղազար Փարպեցու «Հայոց սպարապետ և մարգպան Մամիկոնյանց տիրոջ Վահանին Ղազար Փարպեցու գրած Թուղթը Ամիդ քաղաքից՝ մեղադրություն ստախոս արեղաներին» երկը մեզ է հասել միայն մեկ օրինակով³⁶: Այդ օրինակը Էջմիածնի մատենադարանում

³⁴ Ղազար Փարպեցու գրած թուղթը, էջ 16:

³⁵ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 138:

³⁶ Փարպեցու «Թղթի» երկրորդ թարգմանիչն է Բագրատ Ուլուքբայանը, որն իր թարգմանությունը վերնագրել է «Թուղթ Վահան Մամիկոնյանին, ստախոս արեղաների մեղադրությունը»: Տե՛ս Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Բ. Ուլուքբայանի, Երևան, 1982, էջ 445:

գտել և նրա արժեքը խորապես գիտակցել է հնագետ, մատենագետ, հմուտ գրաբարագետ Հովհաննես Շահխաթունյանցը, որի միջոցով «Թուղթը» ստացել է նշանավոր հայագետ Մկրտիչ Էմինը և 1953 թ. տպագրել Մոսկվայում՝ կցելով համապատասխան առաջաբան և ծանոթագրություններ:

«Թուղթը» հանգամանալի մեկնաբանել է Միքայել Նալբանդյանը՝ միաժամանակ թարգմանելով այն աշխարհաբար: Նալբանդյանը հիացած է Ղազար Փարպեցի պատմիչով. վերջինիս երկը համեմատում է Տակիտոսի տարեգրությունների հետ՝ առանց վախենալու եվրոպական հայագիտության դատաստանից: Նա բարձր է գնահատում «Թղթի» պատմական, ճանաչողական և քննադատական արժեքը:

Մանուկ Աբեղյանը ևս հիացած է Փարպեցու «Թղթով», որովհետև վերջինս ինքնարդարացման հմուտ ձևով լիովին ապացուցել է իր անմեղությունը և մատնացույց արել տգետ աբեղաների ոչնչությունը: «Թուղթը» այսօր էլ պահպանել է իր քննադատական ու մանկավարժական արժեքը:



ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ՀՀ ԳԱՄ Հիմնարար գիտական
գրադարանի տնօրեն
Բանասիրական գիտությունների թեկնածու*

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՆ ՀԱՅ ԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (18-19-րդ դարեր)

Ներածություն

Հայ պատմագրության և բանասիրության համար Ոսկեդարի պատմիչների գործերը միշտ արդիական նշանակություն են ունեցել և շարունակում են ունենալ առ այսօր: Իհարկե, անդրադարձները 5-րդ դարի պատմիչների երկերին միանշանակ և միանման չեն, սակայն յուրաքանչյուրը արժևորվել է յուրովի՝ ըստ իր պատմության արժեքի ու դերի: 5-րդ դարի պատմիչներից ամենաքննարկվածը Մովսես Խորենացին է, որի պատմությունն առաջին անգամ տպագրվել է 17-րդ դարում¹ Թովմաս Վանանդեցու տպարանում և որը մնում է պատմաբանասիրական քննարկումների կիզակետում առ այսօր: Սա բնավ չի նշանակում, թե Ոսկեդարի մյուս պատմիչներն անտեսված են կամ ոչ լիարժեք գնահատված, պարզապես այլ է մոտեցումը:

Սույն ուսումնասիրությամբ մենք նպատակ ենք դրել ներկայացնել Ղազար Փարպեցուն 18-19-րդ դարերի հայ գիտական մտքի գնահատմամբ: Առաջադրել ենք հետևյալ խնդիրները. 1) ե՞րբ են ի

¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, յԱմստէլոյամի, 1695, 12 չհ., 487 էջ:

հայտ եկել առաջին գիտական անդրադարձները, 2) որքանո՞վ է նպաստել Փարպեցու երկերի տպագրությունը այդ անդրադարձների շրջանառության ընդլայնմանը, 3) ի՞նչ հիմնական խնդիրների են անդրադարձել հետազոտողները:

Հոդվածի սահմանափակ հնարավորությունների պատճառով սեղմել ենք հետազոտության շրջանակը՝ նախապատվությունը տալով 18-19-րդ դարերին: Բանն այն է, որ 20-րդ դարից սկսած, առավել ևս խորհրդային ժամանակաշրջանում, անդրադարձները Փարպեցու պատմությանը շատ են և բազմաբովանդակ, իսկ մեկ հոդվածի սահմանում դա ներկայացնել ուղղակի հնարավոր չէ:

Կարծում ենք՝ յուրաքանչյուր սերունդ յուրովի է մեկնաբանում պատմական դեպքերն ու իրադարձությունները, ահա ինչու Ղազար Փարպեցու և Ոսկեդարի մյուս պատմիչների գործերը մնում են գիտական մտքի ուշադրության կենտրոնում:

Առաջին գիտական անդրադարձները

Մինչև 18-րդ դարի վերջը, երբ առաջին անգամ տպագրվել է 5-րդ դարի պատմիչի երկը, Ղազար Փարպեցու անունը և գործը հայտնի չէր հասարակության մեծ մասին:

Հայ տպագրության պատմության մեջ Փարպեցու անունն առաջին անգամ հիշատակել է Միքայել Չամչյանը 1784 թ.²: Նա նրան ներկայացրել է որպես 5-րդ դարի պատմիչ, ընդգծել է պատմության ժամանակահատվածը, պատմական իրադարձությունների շրջանակը, ինչպես նաև՝ որոշ կենսագրական փաստեր: Այսքանով պատմիչի մասին տեղեկատվությունը նա սպառել է:

Փարպեցու մասին առաջին գիտական անդրադարձներն առանձին վերլուծություններ չէին: Դրանք հիմնականում նրա երկերի տպագրություններում ներառված առաջաբաններն էին կամ առանձին հատվածներ որոշ գրքերում: Նրանից մեզ հայտնի են միայն պատմությունն ու «Թուղթ»-ը: Այս առթիվ Գրիգոր Խալաթյանը նշել է, որ պատ-

² Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց երեք հատորով, հտ. Ա., Վենետիկ, 1784, էջ 14, 540:

միչը գրելու սեր չի ունեցել և միայն հարկադրված կամ պատվեր լինելու պարագայում է գրիչը ձեռքը վերցրել³:

Ղազար Փարպեցու մասին տեղեկատվության բացակայության պատճառներից մեկն այն է, որ նրա ձեռագրերը պահվում էին հայագիտական կենտրոնների հարուստ հավաքածուներում, որոնք համակարգված և խորությամբ ուսումնասիրված չէին: Բնավ նպատակ չհետապնդելով սույն ուսումնասիրության մեջ անդրադառնալ Փարպեցու ձեռագրերին՝ հակիրճ նշենք միայն, որ այդ պահոցներն էին Վենետիկը, Վիեննան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը⁴:

Մխիթարյան միաբանության հարուստ հավաքածուների հետազոտության արդյունքում Միքայել Չամչանից հետո Վենետիկում 1793 թ. տպագրվել է Փարպեցու պատմությունը, որով էլ, կարելի է ասել, շարունակվել ու զարգացել է 5-րդ դարի պատմիչի կյանքի և գործունեության ուսումնասիրման պատմությունը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մատենադարանի հարուստ հավաքածուն ուսումնասիրվել է շատ ավելի ուշ, երբ Մատենադարանի և տպարանի կառավարիչ է նշանակվել Հովհաննես Շահխաթունյանը⁵:

Ինչպես ասացինք, 1793 թ. մարտի 22-ին Վենետիկում առաջին անգամ տպագրվում է Փարպեցու «Պատմութիւն Հայոց» գործը, որտեղ «Բան առ վերձանօղս» առանձին խորագրով առաջաբանում հակիրճ տրվում են որոշ տեղեկություններ⁶: Ներկայացնելով անցյալի պատմիչների կարևոր դերը ազգային կյանքի զարթոնքի համատեքստում՝ տպագրության պատասխանատուները նշում են. «Գիւտ այսպիսի հարգատ ազգային պատմագրաց՝ շնորհք և պարծանք իւրաքանչիւր

³ Գ. Խալաթեան, Ղազար Փարպեցի եւ գործք նորին, Մոսկուա, 1883, էջ 27:

⁴ Գ. Տեր Մկրտչեան, Ղազար Փարպեցու ձեռագրերը, Արարատ, Վաղարշապատ, 1901, թ. ԺԱ.-ԺԲ., էջ 542-549:

⁵ Արտակ եպս. Սմբատեանց, Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, Ս. Էջմիածին, 1973, էջ 76:

⁶ Ղազարայ Փարպեցույ արարեալ պատմագրութիւն, Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1793, 320 էջ:

ազգաց»⁷ և շարունակելով՝ ընդգծում, որ իրենք տպագրում են 5-րդ դարի պատմիչ Ղազար Փարպեցու պատմությունը: Առաջին անգամ պատմիչի անունը հայտնի է դառնում ընթերցողների լայն շրջանակին: Հետագայում, երբ Գ. Տեր-Մկրտչյանն ու Ստ. Մալխասյանը հրատարակության են պատրաստել Փարպեցու պատմության և «Թղթի» տպագրությունը, վերապահումով են մոտեցել առաջին և երկրորդ տպագրություններին՝ մեղադրելով հրատարակիչներին բնագիրը կամ բնագրերը չհիշատակելու մեջ, իսկ երրորդ տպագրությունը համարել են միայն արտագրություն⁸: Սակայն երբ մենք սույն գիրքը դիտարկում ենք 18-րդ դարի տպագրության պատմության և բանասիրության համատեքստում, վստահաբար պնդում ենք, որ խիստ կարևոր էր բավական դժվար այդ ժամանակահատվածում այս գրքի հրատարակությունը, որովհետև առաջին անգամ Ղազար Փարպեցին ներկայացվում է հանրությանը և հիմք է նախապատրաստվում՝ հետագայում ուսումնասիրությունները շարունակելու համար: Համեմատության համար նշենք, որ Ոսկեդարի պատմիչներից առաջինը Մովսես Խորենացու պատմությունն է տպագրվել⁹, որին շուրջ մեկ դար անց հաջորդել է Ղազար Փարպեցին:

Սույն տպագրությունը կարևորվում է նաև մեկ այլ տեսանկյունից: Մինչ այդ Փարպեցուց մեզ հասած որոշ ձեռագրեր պահվում էին երեք հայագիտական կենտրոններում: Ձեռագրերի ընդօրինակումը և տարածումը բավական դժվար և ժամանակատար գործ էր, ինչն իր հերթին խոչընդոտում էր պատմիչի մասին տեղեկությունների հանրայնացմանը: Տպագրության գյուտի և տպագրարվեստի զարգացման շնորհիվ ավելի մատչելի է դառնում տեղակատվության տարածումը,

⁷ Նույն տեղում, էջ 3:

⁸ Ղազարայ Փարպեցույ պատմութիւն Հայոց եւ Թուրթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տիփլիս, արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, 1904, էջ Գ:

⁹ Ազգաբանութիւն տոհմիւն յԱբեթեան, յօրինեցեալ ի Մովսիսե Խորենացույ յեռամեծ վարդապետէ և յոգներախտ քերթողաօրէ, յԱմստէլօդամի, Տպիւք և ծախիւք Թօմայ Վանանդեցույ, 1695, 12 չի, 487 էջ:

քանի որ տպաքանակը արագ տարածվում էր բոլոր հայագիտական կենտրոններում, ինչն իր հերթին հնարավորություն էր տալիս ուսումնասիրել Ոսկեդարի պատմիչների գործերն ու անցյալի պատմական իրողությունները:

Պատահական չէ, որ տպագրությունն իրականացվել է հենց Ս. Ղազարում՝ Մխիթարյան միաբանության հայրերի ջանքերով, որն այդ շրջանում հայագիտական խոշոր և կայացած օջախներից մեկն էր, ուներ հարուստ գրքային հավաքածու, և այստեղ էր կենտրոնացած գիտական միտքը: Մխիթարյանների տպագրական գործունեությունը սկսվում է 18-րդ դարի կեսից, սակայն տպագրությունն իրականացվում էր այլ տպարաններում, մինչդեռ Ս. Ղազարում տպարանը հիմնադրվում է 1789 թ., որից չորս տարի անց տպագրվում է Փարպեցու գործը¹⁰: Մխիթարյանները, որոնք նախապատվությունը տալիս էին կրոնական գրքերի տպագրությունը, 1790-ականներից փոխում են իրենց քաղաքականությունը՝ նախապատվությունը տալով գիտական և ազգային բնույթի երկերին: Ահա ինչու շատ տրամաբանական է, որ կանգ են առնում Փարպեցու ձեռագրերի ուսումնասիրության և հանրայնացման վրա: Տպագրարվեստի տեսանկյունից շքեղ այդ գրքի լույսընծայումը հնարավոր է դառնում Ջաքար Բարադամյանցի և Հովսեփ Շահիրիմանյանցի հովանավորությամբ¹¹: Ցավոք, գիրքը չունի հիշատակարան, և հնարավոր չէ պարզել, թե ով կամ ովքեր են եղել ձեռագրերի համեմատողը, տպագրության պատրաստողը և առաջաբանի հեղինակը:

Պատմության առաջին տպագրությունից հետո շուրջ 50 տարի Փարպեցուն անդրադարձ չի լինում: Մեր որոնումները՝ գտնելու որևէ հողված կամ առանձին հրատարակություն, ապարդյուն էին: Ղազար Փարպեցու ժառանգությանը երկրորդ անգամ անդրադառնում են 1848 թ., երբ Մոսկվայում տպագրվում է «Ընտիր հատուածք» վերնագրով

¹⁰ Սահակ Ճեմճեմեան, Սուրբ Ղազարի տպարանի ծնունդը, Բազմավեպ, Վենետիկ, 1989, էջ 7-36:

¹¹ Տե՛ս 1793 թ. տպագրության տիտղոսաթերթը:

ընթերցարան-դասագիրքը¹²՝ նախատեսված Լազարյան ճեմարանի արևելյան լեզուների բաժնի աշակերտների համար: Գիրքը տպագրվում է ցարական Ռուսաստանի գրաքննության պահանջներին համապատասխան, ինչը փաստում է տիտղոսաթերթի դարձերեսի ռուսերեն նշումը, ըստ որի՝ տպագրված գրքից սահմանված քանակի օրինակներ պետք է տրամադրվեին գրաքննական կոմիտեին: Գրքում ներառվում են Խորենացու, Բուզանդի, Ջենոբ Գլակի և այլոց պատմություններից հատվածներ: Նրանց շարքում է նաև Ղազար Փարպեցին, որի պատմությունից ընդգրկված են հետևյալ հատվածները՝ «Արգաւանդութիւն Այրարատոյ», «Գնալն կաթողիկոսին Գիւտոյ ի դուռն Պարսից», «Թագաւորելն Վաղարշու՝ եղբօր Պերօզի», «Նամակ Նիխորոյ առ Վահան Մամիկոնեան»¹³: Նախքան բուն տեքստը սկսելը՝ կազմողները ներածական փոքր պարբերությամբ ներկայացնում են Փարպեցուն. «Ճարտասան մականուանեալ աշակերտ Ադանայ Արծրունոյ և Սրբոյն Սահակայ գրեաց զՊատմութիւն հայոց ի խնդրոյ Վահանայ Մամիկոնէի՝ սկսեալ ի 388 մինչ ի 485, այն է՝ ցաւուրս մարգպանութեան նորին Վահանայ և հայրապետութեան Յովհաննու Մանդակունոյ: Տպագրեցաւ ի Վենետիկ յամին 1793»: Ինչպես 1793 թ., այնպես էլ այս տպագրության մեջ չեն հիշատակված պատասխանատուները, իսկ Փարպեցու մասին տեղեկատվությունը ընդամենը նրա

¹² Ընտիր հատուածք, քաղեալք ի գրոց նախնի եւ արդի մատենագրաց հայոց, հանդերձ բառագրովք ի հայկականէ ի ռուսաց բարբառ, ի պէտս աշակերտաց Լազարեանց ճեմարանի Արևելեան լեզուաց, մասն Ա., Մոսկվա, ի տպագրատան նորին ճեմարանի, 1848, 256, 149 էջ:

¹³ Տե՛ս Ընտիր հատուածք, 1849, էջ 41-59: Ըստ Հայկ Դավթյանի՝ գիրքը տպագրվել է 1848 թ., վերահրատաակվել է 1849 թ.՝ նույն բովանդակությամբ, սակայն տիտղոսաթերթից հանվել է Ա. մասի հիշատակումը: Տե՛ս Հայ գիրքը 1801-1850 թվականներին, կազմ.՝ Հ. Դավթյան, խմբ.՝ Հ. Անասյան, Երևան, 1967, էջ 368, 383: 1848 թ. մատենագիտական նկարագրությունը կատարվել է Լվովի պետական համալսարանի գրադարանի օրինակի վրա, իսկ 1849 թ. տպագրության օրինակներ առկա են հայաստանյան մի շարք գրադարաններում: Սույն հոդվածի շրջանակում մենք ուսումնասիրել ենք 1849 թ. տպագրությունը:

անունը, ինչպես նաև պատմության առաջին տպագրությունը ընթերցողին ներկայացնելու նպատակն է հետապնդում:

Ղազար Փարպեցին՝ 19-րդ դարի երկրորդ կեսի հայ գիտական մտքի հռչակություն

19-րդ դարի երկրորդ կեսը կարելի է բնորոշել որպես Ղազար Փարպեցու կյանքի և գործունեության գիտական արժևորման շրջան, ինչի համար արդեն կային հետևյալ նախադրյալները.

ա. Շնորհիվ Վենետիկի և Մոսկվայի տպագրությունների՝ Ղազար Փարպեցու անունն արդեն հայտնի էր գիտական հանրությանը:

բ. 19-րդ դարում երկու անգամ վերահրատարակվեց Փարպեցու պատմությունը, 1853 թ. տպագրվեց «Թուղթ»-ը, իսկ 1868 թ.՝ Միքայել Նալբանդյանի՝ «Թղթի» հայտնի թարգմանությունը:

19-րդ դարի երկրորդ կեսին մամուլում ի հայտ եկան նաև Փարպեցու մասին առաջին հոդածները և առաջին ամբողջական հրատարակությունները:

Գիտական արժևորման շղթան սկզբնավորվում է 1853 թվականից, երբ առաջին անգամ տպագրվում է Ղազար Փարպեցու «Թուղթ»-ը¹⁴: «Թղթի» հայտնաբերումն ու տպագրությունը բեկումնային դարձավ Ղազար Փարպեցուն գիտական լույսի ներքո ներկայացնելու հարցում:

Գիրքը լույս է տեսնում ժամանակի գրաքննության կանոններին համապատասխան, ինչպես ընդունված էր այդ ժամանակահատվածում¹⁵: Բուն տեքստին նախորդող ծավալուն առաջաբանում հրատարակիչը՝ Մկրտիչ Էմինը, առաջին անգամ գիտականորեն արժևորում է ոչ միայն Ղազար Փարպեցու Թուղթը, այլև նրան՝ որպես պատմիչ և նրա թողած գրական ժառանգությունը: Եթե նախորդ՝ մեզ հայտնի տպագրությունների առաջաբանները միայն Փարպեցու անունը

¹⁴ Ղազար Փարպեցու Թուղթ առ Վահան տերն Մամիկոնեից, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին տեսուչ Լազարեան ճեմարանի Արեւելեան լեզուա, Մոսկվա, ի տպարանի Վլատիմիրայ Գոտիե, 1853, 68 էջ:

¹⁵ Նույն տեղում, տիտղոսաթերթի դարձերեսը:

ընթերցողին հասցնելու միտումն ունեին, ապա այստեղ Մ. Էմինն ընդգծում է, թե որքան կարևոր է ճանաչել սեփական անցյալը, իմանալ պատմությունը, հասկանալ անցյալի գործիչներին և այդ ամենը ներկայացնել աշխարհին¹⁶: Այս համատեքստում նա մատնանշում է Փարպեցու երկերի սկզբնաղբյուրային արժեքը, ինչը խիստ կարևոր է ինչպես Հայաստանի, այլև հարևան երկրների անցյալի փաստերը ճիշտ ներկայացնելու համար:

«Թղթի» տպագրությունը հնարավոր է դառնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մատենադարանապետ Հովհաննես Շահխաթունյանի շնորհիվ¹⁷: 1829 թվականից սկսած, նշանակվելով Մատենադարանի պատասխանատու, Հովհ. Շահխաթունյանը Մսեր վարժապետ Զմյունացու հետ սկսում է կարգի բերել գրքային հավաքածուն, ինչի արդյունքում Մսեր վարժապետը գտնում է Թուղթը, ընդօրինակում և իր հետ տանում Բեսարաբիա: Գտնված օրինակը Հովհ. Շահխաթունյանը ցույց է տալիս Մկրտիչ Էմինին, ով 1848 թ. այցով գտնվում էր Ս. Էջմիածնում: Վերջինիս խնդրանքով նա ընդօրինակում է Թուղթը և ուղարկում իրեն Մոսկվա: Այդ ընթացքում Մկրտիչ Էմինը գտնում է Մսեր վարժապետի ընդօրինակած տարբերակը և երկու օրինակների համեմատությամբ 1853 թ. հրատարակում է գիրքը: Ցավոք, բացի Էմինի առաջաբանից սույն տպագրությունն արժևորող այլ հետազոտություն, տպագրված այդ թվականներին, մեզ գտնել չհաջողվեց: Նշենք միայն, որ 1859 թ. Մկրտիչ Էմինի առաջաբանը նույնությամբ տպագրվել է «Արշալոյս Արարատեան» պարբերականում¹⁸:

19-րդ դարի երկրորդ կեսին Ղազար Փարպեցու կյանքի և գործունեության նկատմամբ հետաքրքրության աշխուժացման արդյունքում վերատպվում են նրա գործերը: Ըստ հայ գրքի համահավաք մա-

¹⁶ Նույն տեղում, էջ 8:

¹⁷ Նույն տեղում, էջ 30-31:

¹⁸ Մ. Էմին, Նկարագիր կենաց, Ղազար Փարպեցույ և ժամանակին յորում եկաց, Արշալոյս Արարատեան, Զմիւռնիա, 1859, թ. 592, 6 մարտի, էջ 1-3, թ. 593, 20 մարտի, էջ 1-2, թ. 595, 17 ապրիլի, էջ 1-3:

տենագիտական ցանկերի՝ տպագրությունների պատկերը հետևյալն է¹⁹.

Հայոց պատմութիւն – Վենետիկ (1873 թ., տպակից՝ «Թուղթ»), Վենետիկ (1875 թ., տպակից՝ «Թուղթ»), Վենետիկ (1891 թ., տպակից՝ «Թուղթ»), Ալեքսանդրապոլ (1895 թ., տպակից՝ «Թուղթ»)

Թուղթ – Ս. Պետերբուրգ (1868 թ.), Վենետիկ (1873 թ., տպակից՝ «Հայոց Պատմություն»), Վենետիկ (1875 թ., տպակից՝ «Հայոց Պատմություն»), Վենետիկ (1891 թ., տպակից՝ «Հայոց Պատմություն»), Ալեքսանդրապոլ (1895 թ., տպակից՝ «Հայոց Պատմություն»):

Որքան էլ տարօրինակ է, Ղազար Փարպեցու 1904 թ. տպագրության մեջ կազմողները չեն հիշատակել պատմության 1895 թ. աշխարհաբար հրատարակությունը և Թղթի 1868 թ. տպագրությունը՝ իրենց գիրքը համարելով Փարպեցու երկերի 4-րդ տպագրություն²⁰: 1875 թ. տպագրությունը հիշատակված է «Հայ գիրքը 1851-1900 թթ.» մատենագիտության մեջ՝ նշելով, որ օրինակներ կան Հայաստանի ազգային և Ս. Պետերբուրգի պետական համալսարանի գրադարաններում²¹: Հայաստանի բոլոր գրադարանների օրինակների համեմատությունից պարզ դարձավ, որ նման հրատարակություն չկա, իսկ Ս. Պետերբուրգի պետական համալսարանի օրինակն առայժմ չի հաջողվել ուսումնասիրել: Վերոնշյալից ելնելով՝ կարծում ենք, որ 1875 թ. տպագրություն չի եղել, պարզապես մատենագետներն այն շփոթել են 1873 թ. տպագրության հետ (երկուսն էլ ունեն նույն էջակալությունը): Այս վարկածը շրջանառության մեջ կմնա այնքան ժամանակ, քանի դեռ չի գտնվել տպագրված որևէ օրինակ:

Վերատպություններին զուգահեռ աշխուժանում են գիտական անդրադարձները: Առանձնացնենք հատկապես Գարեգին Զարբհա-

¹⁹ Գ. Զարբհանալեան, Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, 1883, էջ 373-378, Ա. Ղազիկեան, Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, հտ. Ա., Վենետիկ, 1909, էջ 1627-1641, Հայ գիրքը 1851-1900 թթ., կազմ.՝ Ն. Ոսկանյան, Ա. Սավալյան, Երևան, 1999, 860 էջ:

²⁰ Ղազար Փարպեցի, 1904, էջ Գ.:

²¹ Հայ գիրքը 1851-1900 թթ., էջ 219:

նալյանի անդրադարձը, ով առաջիններից մեկն էր, որ Ղազար Փարպեցուն և նրա գրական ժառանգությանն անդրադառնում է ծավալուն հոդվածով²²: Ինչպես երևում է տիտղոսաթերթից և ինչպես բացատրում է հեղինակը առաջաբանում, գիրքը, որպես դասագիրք, պետք է ծառայեր աշակերտներին, և հիմնական նպատակը ազգային դպրության պատմությունը ներկա և ապագա սերունդներին մատուցելն էր: Առաջին անգամ Ղազար Փարպեցին գիտական արժևորման համատեքստում ներառվում է նաև դասագրքում: Ի տարբերություն 1848 և 1849 թթ. տպագիր դասագրքերի, որոնց մեջ ևս ներկայացված էր Փարպեցին, այստեղ նրա պատմությունից հատվածներ մեջբերված չեն: 13 էջի սահմանում ներկայացված է միայն պատմիչի կյանքն ու գրական ժառանգությունը: Գ. Զարբհանալյանը անդրադառնում է պատմիչի ապրած ժամանակաշրջանին, նրա կենսագրությանը, պատմությանն ու թղթին՝ բարձր գնահատելով նրան հայ պատմագրության մեջ:

Գարեգին Զարբհանալյանից հետո Ղազար Փարպեցու ժառանգությունն արժանանում է Միքայել Նալբանդյանի ուշադրությանը²³: Վերջինս 1868 թ. թարգմանում և հրատարակում է Փարպեցու Թուղթը՝ անհրաժեշտ ծանոթագրություններով, որոնք գիտական հիմնավորումներով փաստարկված վերլուծություններ են: Մինչ Մ. Նալբանդյանը, Փարպեցու մասին վերլուծություններում, անկախ նրանց ծավալից, գերակշռում էր նկարագրական բնույթը: Բոլորն արժևորում էին նրան՝ որպես 5-րդ դարի պատմիչ, ներկայացնում կենսագրական տվյալներ, ընդգծում պատմության կարևոր նշանակությունը: Մ. Նալբանդյանը փոխում է մոտեցումը և որպես գիտնական մոտենում արդեն ծանոթ նյութին ու նախկին վերլուծություններին: Նրա ծանոթագրությունների մեջ գերակշռում են հղումները, որոնք նա անում է՝ իր այս կամ այն տեսակետը հիմնավորելու համար: Մ. Նալբանդյանի

²² Գ. Զարբհանալեան, Պատմութիւն հայերէն դպրութեանց ի պէտս ուսման ազգային վարժարանաց, Վենետիկ, 1865, էջ 280-293:

²³ Ղազար Փարպեցու գրած Թուղթը, մեղադրութիւն ստախօս արեղաներին, թարգմանութիւն և բացատրութիւնք Միքայել Նալբանդեանցի, Ս. Պետերբուրգ, 1868, 84 էջ:

շնորհիվ փարպեցիագիտությունը թնակոխում է նոր փուլ: 1880-1890-ական թվականներին պարբերական մամուլում տպագրվում են առաջին հոդվածները, որոնք հիմնականում կամ Փարպեցու երկերի վերատպությունների գրախոսություններն էին, կամ առանձին խնդիրների գիտական վերլուծություններ²⁴: Նրանց բոլորի մեջ արժևորվում էր պատմիչը և նրա երկը, որը հավաստի տեղեկություններ էր հաղորդում 5-րդ դարի իրադարձությունների մասին:

1883 թ. տպագրվում է Գրիգոր Խալաթյանի ուսումնասիրությունը՝ նվիրված Փարպեցու կյանքին և գրական ժառանգությանը²⁵: Սա առաջին անգամն էր, որ Ոսկեդարի պատմիչին անդրադառնում են առանձին հետազոտությամբ: Ընթերցողին հասանելի են դառնում Իսահակ Հարությունյանի²⁶, Նորայր Բյուզանդացու²⁷, Ալիշանի²⁸, Հակոբ Ճաղարբեկյանի²⁹ ուսումնասիրություններն ու տեսակետները:

²⁴ Հոդվածի սեղմ ծավալի սահմանափակվելու պատճառով ներկայացնում ենք այդ հոդվածների մատենագիտական տվյալները. Սուքիաս վրդ. Պարոնեան, Հայկական նշանագիրք. Ղազար Փարպեցի, Երկրագունտ, Կ. Պոլիս, 1884, Նոյեմբեր, էջ 492; Եղիշե Մատաթեան, Դիտողութիւն մը, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1887, թ. 5, էջ 72; Եղիշե Մատաթեան, Ղազար Փարպեցու պատմութեան առաջաբանը, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1887, թ. 11, էջ 166-167; Զ. Տ. Մ., Փր. Միւլլերի քանի մը յօդուածները, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1891, թ. 6, էջ 178-179; Նորայր Ն. Բիւզանդացի, Ղազարայ Փարպեցույ Պատմութեան Հայոց յառաջաբան, Լումայ Թիֆլիս, 1896, թ. Ա., էջ 309-328; Դ. Խ., Ղ. Փարպեցու եւ Մ. Խոր. մէկ աղերսը, Բիւրակն, Կ. Պոլիս, 1898, թ. 30, էջ 559; Սուքիաս վրդ. Պարոնեան, Ղազարայ Փարպեցույ պատմութեան յառաջաբան ուղղագրեալ, հանդերձ տեսութեամբ մը կրկին յառաջաբանից վրայ, Բանասէր, Պարիս, 1899, թ. 3, էջ 267-379:

²⁵ Գրիգոր Խալաթեան, Նշվ. աշխ., 4 չհ., 130, 3 չհ. էջ:

²⁶ Իսահակ Յարութիւնեանց, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892, էջ 216-236:

²⁷ Նորայր Բիւզանդացի, Հայկական բառաքնութիւն, ուղղութիւնք ընթերցուածոց մատենագրութեանց նախնեաց եւ նշանակութեան բառից, Կ. Պոլիս, 1880, էջ 73-85; Քննասէր, ինքնագրութիւնք Նորայրի, պր. 1, Ստոկհոլմ, 1888, էջ 26-30:

²⁸ Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 158-160, 174, 208:

²⁹ Յակոբ Ճաղարբեկեան, Վահան Մամիկոնեան ըստ Ղազար Փարպեցույ, Տիֆլիս, 1894, 138 էջ:

Եզրակացություն

Կարող ենք եզրակացնել հետևյալը.

ա. Փարպեցու մասին առաջին տեղեկությունները գիտական հանրությանը և ընթերցողին հասանելի են դարձել 18-րդ դարի վերջից:

բ. Փարպեցու գրական ժառանգության հանրայնացմանը մեծապես նպաստել է տպագրական գործի զարթոնքը և կատարելագործումը, ինչի շնորհիվ պատմությունը հասանելի է դարձել գիտական լայն շրջանակին:

գ. Փարպեցու կյանքի և գործունեության մասին առաջին արձագանքները մակերեսային էին, կրում էին տեղեկատվական բնույթ՝ նպատակ հետապնդելով ծանոթացնել պատմիչին ընթերցող լայն հասարակությանը: Դրանցում ներկայացվում էր նաև այն դարաշրջանը, որի մի մասնիկն է եղել պատմիչը:

դ. Առաջին անդրադարձները գիտական համարել չի կարելի, սակայն դրանք շատ կարևոր էին, քանի որ հող են նախապատրաստել Փարպեցու գործերի գիտական վերլուծությունների համար:

ե. Փարպեցու գրական ժառանգության գիտական արժևորումը մեկնարկում 19-րդ դարի երկրորդ կեսից, հատկապես, երբ Մ. Նալբանդյանը թարգմանում և տպագրում է «Թուղթ»-ը՝ համապատասխան ծանոթագրություններով:

զ. 19-րդ դարի երկրորդ կեսին վերլուծություններ են տպագրվում նաև մամուլում, ընթերցողին է ներկայացվում Փարպեցուն նվիրված առաջին մենագրությունը:

է. Բոլոր վերլուծություններում Ղազար Փարպեցին ներկայացվում է որպես 5-րդ դարի պատմիչ, որը հավաստի տեղեկություններ է հաղորդում իր ապրած ժամանակաշրջանի մասին:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳՍՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին
և միջնադարյան գրականության և
նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի ասպիրանտ*

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ներածություն

19-րդ դարի հայ մտավորականության առաջադեմ ներկայացուցիչներից մեկի՝ Մխիթարյան միաբանության անդամ, բանաստեղծ, բանասեր ու պատմաբան, մանկավարժ Ղևոնդ Ալիշանի՝ ավելի քան 60 տարի ծավալած գրական-գիտական գործունեության ակունքները գալիս են հայ հին և միջնադարյան գրականության նկատմամբ նրա ունեցած առանձնահատուկ վերաբերմունքից: Դեռ պատանի տարիքում՝ Կոստանդնուպոլսում, նա մեծ հետաքրքրությամբ ընթերցում էր Ոսկեդարի նշանավոր պատմիչների գործերը, գրառումներ կատարում, խորանում իրեն հետաքրքրող որևէ տեղեկության մեջ: Տեղափոխվելով Վենետիկ և կյանքը մշտապես կապելով գիտության հետ՝ Ալիշանն ավելի ամրապնդեց գիտելիքները՝ դրանք պատմագեղարվեստական քննության ենթարկելով և դառնալով ժամանակի հայ բանասիրության, պատմագրության ու բանաստեղծության առաջին դեմքը և թողնելով գրական մեծ ժառանգություն հետագա սերունդների համար: «Մեր գրականության և մշակույթի պատմության մեջ չկա երկրորդ մի անձնավորություն, ով հավասարապես գիտագեղարվեստական քննության ենթարկած լինի հայոց պատմության տարբեր

իրադարձությունները՝ կազմելով դրանց մատենագրական սկզբնաղբյուրների բնագրերը, վերջիններս ենթարկելով պատմագիտական քննության միխթարյան պատմահայեցողության ու աշխարհայացքի շրջանակում»¹: Ղևոնդ Ալիշանի քննության առանցքում են եղել հայ պատմագրության բոլոր երևելի դեմքերը, սակայն նա առանձնահատուկ վերաբերմունք ուներ Քերթոդահոր՝ Մովսես Խորենացու հանդեպ: «Գերագոյն գրքերը իրեն համար Աստուածաշունչն ու Խորենացին էին, զիրենք մեկնող, լուսաբանող, պատկերազարդող, երգաբանող, շարունակող բոլոր գրքերով մեկտեղ. այդ երկու գրքերուն ամեն մեկ էջը սրբազան, ամեն մեկ բառը յաւիտենականօրեն ճիշդ էր ըստ իրեն»²: Ալիշանի ուսումնասիրության առանցքից անմասն չի մնացել նաև 5-րդ դարի հայ պատմագրության վերջին ներկայացուցիչը՝ Ղազար Փարպեցին, որի «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» և «Պատմութիւն Հայոց» երկերը մեծ նշանակություն ունեն դեպքերի և իրադարձությունների՝ պատմական առումով հայ ժողովրդի համար կարևորագույն ժամանակահատվածի նկարագրության առումով:

Քննարկում

Ղևոնդ Ալիշանը 1890 թ. տպագրած «Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց» կոթողային աշխատության մեջ, ներկայացնելով պատմական Հայաստանի խոշորագույն նահանգը, մանրամասն տալիս է նրա ամենամեծ գավառի՝ Արագածոտնի պատմաաշխարհագրական բնութագիրը, իհարկե, անդրադառնալով 5-րդ դարի նշանավոր գործչի ծննդավայրին՝ Փարպի գյուղին: Ալիշանը խոսում է նախ Բյուրականի, ապա Ամբերդի և Օշականի մասին, այնուհետև պատմում հարևան ձորակում տեղակայված երեք հայտնի գյուղերի մասին. Ղազարավան, Ուշի և Փարպի: Ղազարավանի կամ Լազրևանի մասին Ալիշանը գրում է. «Համարի այսպես կոչեցեալ յանուն Ղազարայ Փարպեցոյ, գորոյ և զգերեզմանատեղի ցուցանեն՝ ի միում յերկուց մատ-

¹ Վ. Դերիկյան, Հայոց պատմության հիմնահարցերը Ղևոնդ Ալիշանի գիտական և գրական գործերում, ՎՒՄ, Երևան, 2020, թ. 4, էջ 219:

² Ա. Չօպանեան, Դեմքեր, Փարիզ, 1924, էջ 85-86:

րանց աւերեալ անսիւն եկեղեցւոյ գեղջն որոյ սրմունք միայն մնան և տեղի սեղանոյն և դուռնն»³: Այստեղից կես մղոն հեռավորության վրա է գտնվում Փարպին՝ «Հայրենիք ճարտասանին և ճարտար պատմչին Ղազարու, յորում ըստ արժան բաղդի բնակէն Հայք 30 տուն, աւանդապահք կրսեր (հավանաբար՝ կրտսեր (ՀՄ) դասակցի) յաւերժայիշատակ մերոց թարգմանչաց և աշակերտի Աղանայ Արծրունոյ...»⁴: Այստեղ Ալիշանը կենսագրական կարճ տեղեկատվություն է տալիս Ղազար Փարպեցու կյանքից. «Որ ՚ի մանկութեան անդ սննդակից և խաղակից եղեալ Մեծին Վահանայ Մամիկոնոյ, յետոյ ուրեմն Մեկենասի իւրոյ, ըստ խնդրոյ նորա գրեաց գՊատմութիւնն, ուղղեաց և թուղթ մի կարևոր առ նոյն՝ կորովի բանիւք, յետ մեկնելոց ՚ի վանաց սրբոյ կաթողիկէին Վաղարշապատու (Էջմիածնի) որոյ հայր և տեսուչ էր կարգեալ ՚ի նմին Վահանայ...»⁵: Ալիշանը նաև մեկ նախադասությամբ ներկայացնում է աբեղաների կողմից նախանձի հողի վրա Փարպեցուն ուղղված մեղադրանքները՝ որոնց իրավացիորեն պատասխանում է պատմիչն իր «Թղթում»:

Ապրելով և կրթություն ստանալով Հայաստանի ապագա մարզպան Վահան Մամիկոնյանի հետ նույն վայրում, կատարելագործվելով Բյուզանդիայում, վերադառնալով հայրենիք, աշխատելով հայ նշանավոր նախարարական տներից մեկում՝ Կամսարականների մոտ, այնուհետև արդեն մարզպան Վահան Մամիկոնյանի նշանակմամբ դառնալով Վաղարշապատի Կաթողիկէ՝ Մայր տաճարի վանահայր և լինելով ժողովրդի կողմից սիրված հոգևորականներից մեկը՝ Ղազար Փարպեցին շարժում է իր հակառակորդների նախանձը, հալածանքների ենթարկվում և ստիպված է լինում գնալ Ամիդ, որտեղ էլ գրում է հայտնի «Թուղթը»: «Ղազարը քաջ պատերազմողի պես զինեց իրեն, որ զորավոր խոսքերով իր ոգու և անվախության և կերպարան-

³ Դեռնոդ Ալիշան, Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 158:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 159:

քի պատկերը այս Թղթի ձեռքով հայտնե նոցա, որով և լուսափայլէ վաստակը իր քարոզության, որ առաջ արել էր նոցա մեջ, որպէսզի չարախոս մարդոց լեզուն կարճանա, որովհետև այս կերպով (ասում էր) տգե՛տ և չի՛ք մարդիկը Հայոց աշխարհից հալածեցին լավ և պիտանի մարդոցը»⁶։ Թղթում հեղինակը բացահայտում է իր հակառակորդների տգիտությունն ու նենգամտությունը։ Այն ունի բացառիկ ճանաչողական արժեք։ «Այս թուղթը առաջադեմ և հետադեմ հոգևորականների պայքարի լավագույն դրսևորումն է»⁷։

«Ստախոս աբեղաների վարքագծի բացահայտման համապատկերի վրա Փարպեցին մեզ ներկայանում է ոչ միայն իբրև համեստ ու առաքինի հոգևորական, այլ նաև իր մարդկային արժանապատվությունը գիտակցող ու անարդարի դեմ մարտնչող անհատ»⁸։ Թուղթը կարդալուց հետո Վահան Մամիկոնյանը հավատում է իր մանկության ընկերոջը՝ նրան հանձնարարելով գրել Հայոց պատմությունը։ Ղազար Փարպեցին գրում է այն՝ շարունակելով Փավստոս Բուզանդին և հասնում մինչև հայերի երկրորդ ապստամբությունը՝ 484 թ.։ «Փարպեցին հաղորդում է այնպիսի փաստեր, որոնք բացակայում են Եղիշեի երկում, իսկ երկրորդ ապստամբության մասին, որն ավարտվեց հայերի և Վահան Մամիկոնյանի փայլուն հաղթանակով, նա ավանդում է սկզբնաղբյուրային արժեք ունեցող տեղեկություններ»⁹։

Հայ դասական մատենագրության և հայոց պատմության լավագույն նմուշները Ալիշանի ուշադրության կենտրոնում էին հատկապես Վենետիկի Մխիթարյանների տպարանը ղեկավարելու տարիներին։

⁶ Ղազար Փարպեցու գրած Թուղթը։ Տե՛ս Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 4, Երևան, 1983, էջ 304։

⁷ Ա. Դոլուխանյան, Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, Երևան, 2012, էջ 36։

⁸ Ե. Մնացականյան, Գերպարակերտման առանձնահատկությունները Ե. դարի հայ պատմագրության մեջ, Երևան, 2007, էջ 10։

⁹ Ա. Դոլուխանյան, Հայ գրականության պատմություն, Երևան, 2006, էջ 33։

1873 թ., այնուհետև 1891 թ. Վենետիկում լույս են տեսնում «Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան» վերտառությամբ ևս երկու տպագրություններ: Ալիշանը բնագիրը ներկայացրել է 3 դրվագով և 100 գլխաբաժանումով, կցել 1793 թ. առաջին տպագրության առաջաբանը՝ վերջում ավելացնելով օգտագործված հատուկ անունների անվանացանկը:

Ղևոնդ Ալիշանի գրական-գիտական գործունեության ամբողջացումը, իհարկե «Հայապատում» աշխատությունն է: 1901 թ. տպագրված մեծածավալ երկն ունի ուրույն կառուցվածք. այստեղ հեղինակն անդրադարձել է Ղազար Փարպեցուն: Արշակ Գ.-ի, Խոսրով Գ.-ի, Սահակ Պարթևի, Աղան Արծրունու, Վարդան Մամիկոնյանի, Արշավիր Կամսարականի, Ղևոնդ Երեցի, Վասակ Սյունեցու, Վահան Մամիկոնյանի, նրանց վերաբերող պատմությունները ներկայացնելիս Ալիշանը մեջբերել է ամբողջական հատվածներ Հայոց պատմության»՝ Ա, Բ, Թ, ԺԱ, ԺԴ, ԺԸ, ԻԶ, ԻԸ, ԻԹ, ԼԴ, ԼԸ, ԽԲ, ԽԶ, ԾԱ, ՀԴ, ՀԵ-ՀԶ, ԶԱ, ԶԳ, ԴԵ հատվածներից: Կան տեղեկություններ, որ «Հայապատում»-ում ներկայացված են միայն Ղազար Փարպեցու մեկնաբանությամբ, կան այնպիսիները, որոնք Ալիշանը մեջբերել է մեկից ավելի պատմիչների երկերից: Մասնավորաբար՝ Սուրբ Սահակի վախճանի մասին նյութը «Հայապատում»-ի ՃԻԲ հատվածում քաղաբերված է նախ Ղազար Փարպեցու Պատմությունից, ապա «Նոյն բան ըստ Խորենացու» վերնագրով ՃԻԳ հատվածում ներկայացվում է Պատմահոր մոտ առկա հատվածը: Վարդանանց պատերազմի մասին պատմությունները տպագրված են Եղիշեի և Ղազար Փարպեցու մատուցմամբ: Ալիշանը տողատակերում տալիս է անծանոթ բառերի բացատրությունները կամ էլ թողնում է իր մեկնաբանությունները այս կամ այն տվյալի մասին: Օրինակ, հայ նախարարների՝ Հազկերտի մոտից վերադառնալու և ուրացության լուրը լսելուց հետո հայերի արձագանքները Փարպեցին նկարագրում է այսպես. «Այլ անդ էր լսել զձայնս լալոյ և զձայնս գուժի, գոչինս ողբոց և բարբառ ճչոյ. տղայք անձկոտք ի գրկաց հարց իւրեանց պակուցեալք փախչէին, կարծելով այլափո-

խեալս իմն, և ոչ զնոյնս նկատելով կերպարանս՝ զարհուրէին, ստէպ հայելով յերեսս մարցն, զորս տեսանէին կողկողագինս միշտ և արտօսարբուղիս. յաղագս որոյ և ինքեանք յարտասուս հարեալ տղայքն՝ ոչ ոք կարէր լռեցուցանել ի դայեկացն կամ ի դաստիարակացն»¹⁰: Այս հատվածի մեջբերումից հետո Ալիշանը տողատակում հայտնում է իր հիացմունքը պատմիչի ոճի մասին. «Ի՛նչ սրտառուչ և գեղեցիկ ստորագրություն. արժանի և պատկերահանութեան, բայց՝ Ռափայելեան ճարտար գրչաւ»¹¹: Ղազար Փարպեցու երկում կան հատվածներ, որոնք հասկանալի չեն Ալիշանի համար, ինչի մասին գիտնականը ազնվորեն հայտնում է ընթերցողին: Դիցուք՝ Արշակ Գ.-ի խոսքերը հայոց թագավորության՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանվելուց հետո. «Թէպէտ երբէք մինչև ցայժմ կամ հակառակութեամբ կամ սիրով եղեալք մեք ընդ միմեանս՝ զգացուցեալ էր մեր նոցա գործով պատերազմի, որպէս և պարտ էր ճանաչել առն զփորձ միւսոյ ևս լաւագունի քան զինքն. և թէ խոնարհեալ դիպէաք ի սէր առ միմեանս՝ սակայն եղբայր լինէաք հաշուեալ նոցա, պատուով և գահակցութեամբ ըստ կրսերագոյն մասին, և ոչ բնաւ անկեալք ի բաժին՝ զանունէ ծառայութեան ստացեալ կրէաք յանձինս»¹²: Ալիշանը տողատակում գրում է. «Խառնակ և շփոթ է շարադրութիւն բանիցն»¹³, սակայն թե ինչն է իրեն անհասկանալի, չի նշում: Կան դեպքեր, որ Ալիշանն իր մեկնաբանությամբ նոր տեղեկություն է հաղորդում հենց Ղազար Փարպեցու մասին: Աղան Արծրունու մասին տեղեկությոյնց հետո նա ընդգծում է, որ պատմիչը աշակերտել է նրան. «Հեղինակս (Ղազ. Փարպ.) ատենօք աշկերտ եղած է Աղանայ, վասն որոյ իր պատմագրութեան մէջ յիշէ զնա»¹⁴:

¹⁰ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982, էջ 128:

¹¹ Ղեւոնդ Ալիշան, Հայապատում, Ա, Վենետիկ, 1901, էջ 365:

¹² Ղազար Փարպեցի, Նշվ. աշխ., էջ 18-19:

¹³ Ղեւոնդ Ալիշան, Հայապատում, Ա, էջ 311:

¹⁴ Նույն տեղում, էջ 347:

Ղազար Փարպեցու «Թղթին» Ղևոնդ Ալիշանը «Հայապատում»-ում հատկացրել է առանձին երկու դրվագ՝ ՃԾԸ՝ «Վահան Մամիկոնեան յերիտասարդութեանն եւ եղբարքն» և ՃԾԹ՝ «Ղազար Փարպեցի եւ Թուղթ նորա առ Վահան» վերնագրերով: Առաջինը Վահան Մամիկոնյանի կերպարի և նրա եղբայրների մասին փոքրիկ տեղեկատվական նյութ է՝ քաղված Փարպեցուց, իսկ երկրորդ հատվածն, ըստ Ալիշանի, Ղազար Փարպեցու՝ Վահան Մամիկոնյանին ուղղված Թղթի մասին պատմիչի հմուտ աշակերտներից մեկի ձեռքի գործն է. «Ոչ նախընթաց երկու տգիտական յօդուածոց նմանութիւն, այլ հմուտ և ճարտար գրչի է գրուածս, թերեւս Ղազարու աշակերտի. որոյ առ Վահան Մամիկոնեան գրած Թղթոյն՝ յառաջաբանն է սա»¹⁵: Այստեղ Ալիշանը ամենայն հավանականությամբ նկատի ունի առաջին տպագրությունների համար հիմք հանդիսացած ձեռագրերից մեկը:

Ղևոնդ Ալիշանը գրական դաշտ մուտք է գործել որպէս բանաստեղծ՝ դառնալով ռոմանտիզմի առաջամարտիկներից մեկը՝ հայ գրականության մեջ: Նրա քերթվածները ներշնչված են հայրենասիրական բարձր ոգով և մեր պատմության գերազանց իմացության, պատմագրության, պատմական հերոսների նկատմամբ ունեցած խոր հարգանքի, սիրո դրսևորման բանաստեղծական արգասիք են: Ալիշանի քերթվածների մեջ առանձնանում են պատմական թեմաներով ստեղծագործությունները, որոնք, անշուշտ, գրված են Փավստոս Բուզանդի, Մովսէս Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու և մյուս պատմիչների երկերի ազդեցությամբ: «Երգք Նահապետի» շարքի գրեթե բոլոր բանաստեղծությունները՝ «Հայոց աշխարհիկ», «Պլպուլն Ավարայրի», «Ողբամ զբեզ, հայոց աշխարհ» և այլն, դրա վառ վկայությունն են: Իսկ «Երգ ու գնացք զօրացն Հայոց» քերթվածը, կամ հանրությանը առավել հայտնի «Բա՛մ, փորոտանը», որ դեռ իր կենդանության օրոք Վենետիկի վարժարանում դարձել էր յուրաքանչյուր միջոցառման ոչ պաշտոնական օրհներգ, ամբողջությամբ գրված է Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» և «Թղթի» ազդեցությամբ ու ոգեկոչում է նրա մեկենա-

¹⁵ Ղևոնդ Ալիշան, Հայապատում, Ա, էջ 441:

սին՝ հայոց պատմության ամենավաղ կերպարներից մեկին՝ Վահան Մամիկոնյանին: Բանաստեղծությունն ամբողջությամբ մարտակոչ է, Վարդան Մամիկոնյանի, մյուս սրբադասված հերոսների վրեժն առնելու կանչ, որին անսուս է Վահանը, գրոհում և թշնամու նկատմամբ հաղթանակ տոնում:

*Հեծեալ հրանրժոյգ վեհին Վարդանայ՝
Վրէժ կանչէ արեան Կարմիր Վարդանայ,
Փորընչեալ բոցաշունչ դափը ի գարշապար
Ռազմամուտ վարգի յանժոյժ երիվար...*

*Օ՛ն անդր յառաջ,
Մի ձա՛խ մի յա՛ջ,
Օ՛ն անդր յառաջ,
Հապ՝ օ՛ն, յառաջ:
Ի յաղթանակ¹⁶:*

Եզրակացություն

Ամփոփելով, կարող ենք ասել, որ 5-րդ դարի հայ պատմագրության վերջին պատմիչը՝ Ղազար Փարպեցին, իր «Հայոց պատմություն» և «Թուրթ առ Վահան Մամիկոնյանի» երկերով հետաքրքրել է Ղևոնդ Ալիշանին, որն իր տարբեր աշխատություններում օգտագործել է պատմիչից վերցված տեղեկությունները, տվել մեկնաբանություններ: Ղևոնդ Ալիշանի ջանքերով Վենետիկում 1873 թ. տպագրվել են այդ երկերը մեկ գրքով, իսկ 1891 թ. նույնությամբ վերատպվել: Ալիշանի «Այրարատ» երկում տեղեկություններ են տրված Ղազար Փարպեցու ծննդավայրի՝ Փարպի գյուղի մասին, իսկ «Հայապատում» աշխատության տարբեր հատվածներում ներառված են տարբեր հատվածներ պատմիչի երկերից: Կարող ենք ասել, որ Ղևոնդ Ալիշանի մի շարք արձակ բանաստեղծություններ ծնվել են Ղազար Փարպեցու և մյուս պատմիչների երկերի բացահայտ ազդեցությամբ:

¹⁶ Ղևոնդ Ալիշան, Նվագներ, Երևան, 1957, էջ 97-100:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ էջ 4

ПРЕДИСЛОВИЕ էջ 6

FOREWORD էջ 8

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ, ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը» էջ 10

ԱՇՈՏ ԳԱԼՍՅԱՆ

Ղազար Փարպեցու լեզվական առանձնահատկությունները
նրա պատմության երկու հատվածներում. «Արարատյան դաշտի
նկարագիրը», «Նվարսակի պայմանագիրը»..... էջ 21

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկը և
Աստվածաշունչը..... էջ 28

ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Եղիշեի և Ղազար Փարպեցու պատմությունները Ավարայրի
ճակատամարտի մասին..... էջ 41

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

Ղազար Փարպեցու «Թղթի» քննադատական ու
դաստիարակչական ոգին..... էջ 54

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ղազար Փարպեցին հայ գիտական մտքի գնահատմամբ
(18-19-րդ դարեր) էջ 68

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳՍՅԱՆ

Ղազար Փարպեցին Ղևոնդ Ալիշանի աշխատություններում..... էջ 80

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Հոդվածների ժողովածու

Ստորագրված է տպագրության 02.10.2023:

Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:

Տպագրությունը՝ օֆսեթ: տպ. 5.75մամուլ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

Հրատարակչություն

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:

Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52-79-74

Էլ. փոստ lusakn@rambler.ru